

ԻԳԻԹ
ԳԱՐԵԳԻՆԻ
ՂԱՐԻԲՅԱՆ



ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ
9

ИГИТ ГАРЕГИНОВИЧ
ГАРИБЯН
БИБЛИОГРАФИЯ

ARMENIAN REPUBLIC NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HONORED SCIENTISTS
9

IGIT G. GHARIBYAN
BIBLIOGRAPHY

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2019
YEREVAN
IAE PUBLICATION 2019

168519X

016:[929] ~~Quartermaster~~ + 902/904

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ԳԻՏԱԿԱՆՆԵՐ

9

ԻԳԻԹ ԳԱՐԵԳԻՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

ԿԵՆԱՐԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կազմող՝ Նորա Ենգիբարյան



ԵՐԵՎԱՆ
ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 902
ԳՄԴ 63.4
Ի 182

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝
Պ. Ավետիսյան

Ի 182 Իգիթ Ղարիբյան: Կենսամատենագիտություն / Կազմող՝ Ն. Ենգի-
բարյան), – Երևան, ՀԱԻ հրատարակչություն, 2019, 56 էջ. – (Վաստա-
կաշատ գիտնականներ 9):

Գրքույկը նվիրված է հնագետ, պրոֆեսոր Իգիթ Ղարիբյանի անցած
ուղուն և գիտական աշխատությունների համառոտ վերլուծությանը:
Նախատեսված է հայագետների և ընթերցող լայն շրջանակների հա-
մար:

ՀՏԴ 902
ԳՄԴ 63.4

ISBN 978-9939-9208-7-0

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2019



ԻԳԻԹ ԳԱՐԵԳԻՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Երևանի պետական համալսարանի դասախոս, հնագետ-պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Իգիթ Գարեգինի Ղարիբյանը ծնվել է 1937 թ. դեկտեմբերի 1-ին Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում, արհեստավորի ընտանիքում, ում նախնիները գաղթել էին Արևմտյան Հայաստանի Արծափ բնակավայրից: 1939 թ. ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ նա սովորում և գերազանցությամբ ավարտում է Հ. Թումանյանի անվան թիվ 32 միջնակարգ դպրոցը: 1957–1960 թթ. Ի. Ղարիբյանը ծառայել է խորհրդային բանկում և անբասիր ծառայության համար բազմից արժանացել է խրախուսանքի, զորացրվել է կրտսեր սպայի աստիճանով: Զինվորական ծառայության ընթացքում Մոսկվայում մասնակցել է խորհրդային բանակի գերազանցիկ զինվորների համահավաքին: Ունեցած հաջողությունների համար նրա անունը գրանցվել է Համամիութենական Լե-

նինյան կոմերիտմիության պատվո գրքում և պարզեցնելով է Համլկեմ Կենտկոմի պատվոգրով: Ծառայության ժամանակ անդամագրվել է ԽՄԿԿ շարքերին:

1960–65 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Սովորելու ընթացքում բարձր առաջադիմության համար արժանացել է Հակոբ Մանանյանի անվան կրթաթոշակի: Ակտիվորեն մասնակցել է ֆակուլտետի և համալսարանի ուսանողական կյանքին: Գլխավորել է պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը: Երևանում, Մոսկվայում և Ռիժորությում կարդացել է մի շարք գեկուցումներ, ընտրվել համամիութենական ուսանողական հնագիտական կոնֆերանսների նախագահության անդամ: Եղել է Երևանի պետական համալսարանի ուսանող հնագետների XI կոնֆերանսի կազմակերպիչներից, որի համար պարզեցրվել է Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեի պատվոգրով:

1965–1968 թթ. Ի. Ղարիբյանը սովորել է ԵՊՀ-ի ասպիրանտուրայում՝ «Հայաստանի միջնադարյան հնագիտություն» մասնագիտությամբ, աշակերտելով Ժամանակի նշանավոր հնագետ-պատմաբաններ Կարո Ղաֆարյանին և Բարկեն Առաքելյանին: Ուսումնառության տարիներին մասնակցել է Լճաշենի, Գառնիի, Արմավիրի, Դվինի պեղումներին, փորձ և հմտություն ձեռք բերելով հնագիտության ասպարեզում: Ասպիրանտական շրջանում նրան է վստահվում դեկանարելու Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռե բերդաքաղաքի պեղումները: Աշխատանքի արդյունքը՝ «Լոռե բերդ-քաղաքը և նրա պեղումները (պատմա-հնագիտական ուսումնասիրություն)» թեկնածուական ատենախոսությունն էր, որը նա պաշտպանում է 1970 թ.՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1968 թ. Ի. Ղարիբյանը աշխատանքի է անցել ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի նորաբաց «Հնագիտություն, ազգագրություն և աղբյուրագիտություն» ամբիոնում որպես դասախոս, ապա ավագ դասախոս, իսկ 1972 թ. ստացել է դոցենտի կոչում:

1969–1980 թթ. համալսարանի գիտական խորհրդի հանձնարարությամբ, Ի. Ղարիբյանը պեղումներ է կատարել Վայոց ձորի Թանահա-

տի վանական համալիրի տարածքում, նպատակը՝ պարզեցու միջնադարյան Հայաստանի նշանավոր Գլանորի համալսարանի տեղադրության խնդիրը: Կատարված պեղումների արդյունքները հրապարակել է հոդվածներով և «Գլանոր, տեղադրությունը, պեղումները և Վիմագիր արձանագրությունները» մենագրությունով: Մենագրությունում ներկայացված են պեղումների ընթացքը, մատենագիտական, վիմագրական տեղեկություններ: Ի. Ղարիբյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1984թ. նշված Գլանորի համալսարանի 700-ամյա հորելյանին նվիրված տոնակատարության կազմակերպմանն ու անցկացմանը:

1978թ. Ի. Ղարիբյանի ղեկավարությամբ սկսվում է Բջնի միջնադարյան ամրոցի պեղումները: Պեղումները կայացել են ընդհատում-ներով 1978–1980 թթ., 2003–2009 թթ., 2012թ., 2014թ.: Բջնիում անցկացվում էին նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողների հնագիտություն առարկայի պրակտիկ ուսուցումը: Հնավայրի և շրջակայքի հուշարձանների մասին հրատարակվել են հոդվածներ և հիմնադրույթներ, որտեղ քննության են առնվել երրեմնի հզոր ավատատիրական ամրոցի պեղումներով բացված շինությունները, շրջակայքի դամբարանները, վաղ միջնադարյան եկեղեցին:

1996թ. Ի. Ղարիբյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Ժանահատ-Գլանոր (Տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները)» թեմայով: 2005թ. նա ստանում է պրֆեսորի կոչում:

Մասնագիտության բերումով Ի. Ղարիբյանը շուրջ 40 տարի ղեկավարել է պատմության ֆակուլտետի ուսանողների դաշտային հնագիտա-ազգագրական պրակտիկան, որը ներառում է շրջագայություններ Հայաստանի միջնադարյան հնագիտա-ճարտարապետական հուշարձաններ և վանական համալիրներ: Ուղևորությունների ընթացքում ուսանողների առաջադրված հարցերին պատասխանելու և տեսական գիտելիքներ տալու նպատակով Ի. Ղարիբյանը հրատարակել է Հրաշագործ սր. Գեղարդին, Գրիգոր Լուսավորչի Աջին, Հովհաննավանքի և Մուղնու սր. Գևորգ վանական համալիրներին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ:

2000թ. հայրենի Մեղրաձոր գյուղի հոգաբարձուների խորհուրդը Ի. Ղարիբյանին պատվիրում է գրել իրենց նախնիների՝ Կոգովիտի

գավառի Արծափ բերդավանի, իրենց գոյությունը պահպանելու համար թուրք և քուրդ ջարդարարների դեմ մղած հերոսական պայքարի, 1829–1830թթ. արտագաղթի ընթացքի, ‘որ բնակավայրի՝ հիմնադրման ու կառուցապատման, հնամենի սովորույթների, տեղում պահպանված հնագիտական հուշարձանների պատմությունը մինչև 1918թ։ Շուրջ վեցամյա պրատումների, նաև Ազգային արխիվում պահպող փաստաթղթերի տեղեկությունների հիման վրա հաջողվեց ստեղծել «Արծափ-Մեղրաձոր» ստվարածավալ մենագրությունը, որն այսօր էլ իր տեսակի մեջ մնում է չգերազանցված։

2009թ. լույս տեսավ Ի. Ղարիբյանի «Լոռե բերդաբաղարը» ծավալուն մենագրությունը, դա առաջին աշխատանքն է նվիրված ավատական թագավորական կենտրոնին և լուրջ ներդրում է համարվում միջնադարյան Հայաստանի հնագիտության բնագավառում։ Ուսումնախրությունում ի մի է բերվել հեղինակի Կյուրիկյան թագավորության հոչակման տարեթվի ճշգրտման, Շիրակի Բագրատունի թագավորների գործունեության, 1966–1974թթ. պեղումների արդյունքներին, կավե ծխամորների թվագրության, միջնադարյան բաղնիքների, շատրվանով ջրավազանների մասին առանձին հոդվածներով հրապարակումները։ Ի. Ղարիբյանի աշխատանքում լուսաբանվում է հայ-վրացական սահմանամերձ տարածքների նյութական մշակույթի բնույթը և փոխադարձ ազդեցությունների աստիճանը։ Հուշարձանի հետագա պեղումների արդյունքները հրատարակվել են առանձին հոդվածով։

Ի. Ղարիբյանի գործունեության ոլորտներից է նաև թարգմանչական աշխատանքները։ Նպատակ ունենալով օգնել ուսանողներին առարկան ավելի հեշտ յուրացնելու, նա թարգմանել է հնագիտությանը («Դ. А. Авдусин, Археология, М.1977») և նախնադարյան հասարակությանը («А. П. Першиц, А.Л.Монгайт, В. П. Алексеев, История первобытного общества, М. 1982», « В. П. Алексеев, А. П. Першиц, История первобытного общества») վերաբերող դասագրքեր։ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի հանձնարարությամբ 2012թ. «Նախնադարյան հասարակության պատմություն» դասագիրքը վերահրատարակվել է։ Այս հրատարակությունում չխաթարելով դասագրքի կառուցվածքն ու տրամաբանությունը հանվել են անհարկի տարակարծություններին և ոչ էական տեղեկատվությամբ թեմաներին վերաբե-

րող հատվածները: Արդյունքում նյութը դարձել է ավելի ընկալելի նաև կրնատվել է շարադրանքի ծավալը:

Ի. Ղարիբյանի մյուս կարևոր ու արժանապատիվ կոչումը մանկավարժությունն է: Շուրջ 50 տարի նա դասավանդել է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետում, ուսանողները նրա ջանքերով հաղորդակից են դարձել Հայաստանի անցյալին, նշանավոր հնագետների գործունեությանը: Երկար տարիներ Ի. Ղարիբյանը ուսանողներին դասավանդել է մասնագիտական «Հայաստանի միջնադարյան հնագիտություն», «Միջնադարյան Հայաստանի խեցեղենը», «Միջնադարյան Հայաստանի քաղաքները և ամրոցները» «Նախնադարյան հասարակության պատմություն», «Հնագիտության պատմություն» առարկաները: Նրա դասախոսություններն աչքի են ընկել տրամարանությամբ և մատչելիությամբ: Ուսանողները նրան սիրում և հարգում էին անաշառության, արդարացի խստության ու պահանջկոտության համար: Այսօր հնագիտության, ազգագրության, պատմության և երկրի կառավարման ասպարեզում աչքի ընկնող շատ գործիչներ անցել են Ի. Ղարիբյանի հնագիտական, հատկապես միջնադարագիտական դպրոցը: Մի քանի տասնյակից ավելի երիտասարդներ գիտական աշխարհ են մտել Ի. Ղարիբյանի դեկանակարության ներքո, նաև ընդդիմախոսել է թեկնածուական և դոկտորական թագմաթիվ ատենախոսություններ: Գիտնականը գրախոսել, ինչպես նաև խմբագրել է մի շարք մասնագիտական աշխատանքներ: Ի. Ղարիբյանը հանդիսանում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական, Պատմա-մշակութային ժառանգություն գիտահետազոտական կենտրոնի գիտական և Մշակույթի նախարարության Միջգերատեսչական խորհուրդների անդամ:

Հարգարժան գիտնականը վաստակած հանգստի է անցել 2017թ. սեպտեմբերին: Անկախ պրոֆեսոր Ի. Ղարիբյանի առաջացած տարիքին, նրա բոլոր գործընկերներն գիտնականից ակնկալում են նոր, հետաքրքիր ուսումնասիրություններ ու մտահղացումներ:

ԻԳԻԹ ԳԱՐԵԳԻՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1937 թ. ղեկատեմբերի 1. ծնվել է Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում

1057–1960 թթ. ծառայել է խորհրդային բանակում

1959 թ. Մոսկվայում մասնակցել է ԽՍՀՄ զինված ուժերի գերազանցիկների հավաքին և պարգևատրվել է պատվոգրով

1960–1965 թթ. սովորել է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետում

1962–1965 թթ. սուացել է Հ. Մանանյանի անվան կրթաթոշակ

1965–1968 թթ. սովորել է ԵՊՀ-ի ասպիրանտուրայում

1963–1964 թթ., 1966–1968 թթ. մասնակցել է Լճաշենսի, Գառնիի, Արմավիրի, Դվինի հնագիտական արշավախմբերի աշխատանքներին

1966–1974 թթ., 2009–2015 թթ. ղեկավարել է Լոռե բերդաքաղաքի հնագիտական արշավախումբը

1968 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնում որպես դասախոս

1969–1980 թթ. ղեկավարել է Թանահատ վանական համալիրի պեղումները

1970 թ. շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան

1978–1980 թթ. և 2003–2009 թթ., 2012 թ., 2014 թ. ղեկավարել է Բջնիի ամրոցի պեղումները

- 1996 թ. շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան**
- 1998–2017 թթ.ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովի անդամ**
- 2000 թ. ընտրվել է «Բնություն և հասարակություն» գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս**
- 2001 թ. մինչ այժմ Պատմա-մշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ**
- 2000–2002 թթ. Զբաղեցրել է ԵՊՀ-ի Հնագիտության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը**
- 2001–2005 թթ. ԵՊՀ-ի Հնագիտության ամբիոնի վարիչ**
- 2005–2010 թթ. ԵՊՀ-ի Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ**
- 2005 թ. ԲՈՀ-ի կողմից շնորհվում է պրոֆեսորի կոչում**
- 2005 թ.-ից մինչ այժմ Մշակույթի նախարարության միջզերտեսչական խորհրդի անդամ**
- 2007 թ. պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով**
- 2009 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով**
- 2014 թ. դեկանվարել է Թե՛ժառույգի (Մեղրաձոր) եկեղեցու մաքրման-պեղման աշխատանքները:**
- 2018 թ. պարգևատրվել է Կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով:**
- 2018 թ. անցել է վաստակած հանգստի**

ГАРИБЯН ИГИТ ГАРЕГИНОВИЧ

Преподаватель Ереванского Государственного Университета, историк-археолог, доктор-профессор исторических наук Гарибян Игит Гарегинович родился 1-го декабря 1937 года в селе Меградзор Разданского района, в семье ремесленника, чьи предки эмигрировали из Западной Армении (селение Ардаг). В 1939 г. семья переселилась в Ереван, где он учился и с отличием окончил среднюю школу № 32 имени О. Туманяна. В 1957–1960 гг. И. Гарибян служил в советской армии и неоднократно поощрялся за безупречную службу. Он демобилизовался в звании младшего офицера. Во время военной службы в Москве участвовал на встрече солдатов-отличников Советской Армии. Во время службы стал членом КПСС, его имя было занесено в почетную книгу Всесоюзного Ленинского Коммунистического Союза Молодёжи. Гарибян Игит Гарегинович награжден почетной грамотой ЦК ВЛКСМ.

В 1960–65-х гг. учился на историческом факультете Ереванского государственного университета. Во время учебы удостоился стипендии имени Акопа Манандяна за высокую успеваемость. Активно участвовал в студенческой жизни факультета и университета, возглавлял научное студенческое общество исторического факультета, выступал с различными докладами в Ереване, Москве и Ужгороде, был избран членом президиума всесоюзных студенческих конференций, был одним из организаторов XI конференции студентов археологов Ереванского государственного университета и был награжден почетной грамотой государственного комитета высшего и среднего специального образования Армении.

С 1965 по 1968 гг. И. Гарибян учился в аспирантуре ЕГУ, по специальности «Средневековая археология Армении», под руководством таких известных историков-археологов своего времени как Каро Кафа-

дарян и Бабкен Аракелян. В студенческие годы участвовал на раскопках Лчапена, Гарни, Армавира и Двина, приобретая опыт и навыки в области археологии. В годы аспирантуры ему было доверено руководство раскопками города-крепости Лоре, столицы Кюрикидского царства. Результатом работы является кандидатская диссертация «Город-крепость Лоре и его раскопки (историко-археологическое исследование)», которую он защитил в 1970 г., получив научную степень кандидата исторических наук.

В 1968 г. И. Гарибян приступил к работе в качестве преподавателя на кафедре «Археологии, этнографии и источниковедения» исторического факультета ЕГУ, затем старшего преподавателя, а в 1972 г. получил звание доцента.

В 1969–1980 гг. по поручению научного совета университета, И. Гарибян вёл раскопки на территории монастырского комплекса Танаат в Вайоц Дзоре. Раскопки велись с целью уточнить локализацию знаменитого Гладзорского университета средневековой Армении. Результаты раскопок были опубликованы в статьях и монографии «Гладзор (Локализация. Раскопки. Эпиграфика)». В монографии представлен процесс раскопок, историографические, эпиграфические данные, данные о том, когда и где действовал университет. И. Гарибян также активно участвовал в организации мероприятия, посвященного 700-летию Гладзорского университета, отмеченного ЮНЕСКО в 1984 г.

В 1978 г. под руководством И. Гарибяна начинаются раскопки средневековой крепости Бджни. Раскопки продолжались с перерывами в 1978–1980 гг., 2003–2009 гг., затем в 2012 и 2014 гг. Также в Бджни проводились практические занятия по предмету археология для студентов исторического факультета Ереванского государственного университета. О древнем поселении и близлежащих памятниках опубликованы статьи и тезисы, в которых рассматриваются постройки, обнаруженные при раскопках некогда мощной крепости эпохи феодализма, находящиеся на территории погребения, а также раннесредневековая церковь.

В 1996 г. И. Гарибян защитил докторскую диссертацию по теме «Танаат-Гладзор (Локализация, раскопки, эпиграфические надписи)», а в 2005 г. получил звание профессора.

Около 40 лет И. Гарибян руководил полевой археологическо-этнографической практикой студентов исторического факультета, которая включала обзорные экскурсии по средневековым археологическим и архитектурным памятникам, монастырским комплексам Армении. Для того, чтобы во время поездок отвечать на вопросы студентов и передавать им теоретические знания И. Гарибян занялся исследованиями Чудотворного св. Гегарда, мощами Григория Просветителя, монастырских комплексов Ованнаванк и Мугни.

Совет попечителей родного села Мехрадзор в 2000 г. заказал И. Гарибяну работу по написанию истории их предков с древних времен до 1918 года. В эту работу должны были войти история бердавана Арцап гавара Коговит, история героической борьбы за существование против нападок турок и курдов, история эмиграции 1829–1830 гг., основании нового поселения, старых обычаев, а также сохранившихся археологических памятников. После шести лет поисков, а также на основе сведений документов, сохранившихся в Национальном архиве, удалось создать увесистую монографию «Арцап-Мехрадзор», которая и поныне является непревзойденной.

В 2009 г. была опубликована объемная монография И. Гарибяна «Город-крепость Лорэ», которая была первой работой, посвященной феодальной царской резиденции, и считается серьезным вкладом в изучение средневековой археологии Армении. В вышеупомянутом труде были обобщены данные отдельных статей и публикаций автора, посвященных уточнению даты провозглашения Кюрикского царства, деятельности царей Багратидов Ширака, результатам раскопок 1966–1974-х гг., датировке глиняных трубок, средневековым баням, бассейнам системой водоснабжения с фонтанами. В работе И. Гарибяна освещается характер материальной культуры армяно-грузинских приграничных территорий и степень их взаимовлияний. Результаты последующих раскопок памятника были опубликованы в отдельной статье.

Одной из сфер деятельности И. Гарибяна является также переводческая работа. С целью помочь студентам легче усвоить преподаваемый предмет, он перевел книги, относящиеся к археологии («Д. А. Авдусин,

Археология, М.1977») и первобытному обществу («А.П.Першиц, А.Л.Монгайт, В.П.Алексеев, История первобытного общества, М. 1982», «В.П.Алексеев, А.П.Першиц, История первобытного общества»). В дальнейшем, по поручению научного совета Исторического факультета, И.Гариян в 2012г. переиздал учебник «История первобытного общества». Из учебника были исключены некоторые части относящиеся к неуместным разногласиям и несущественной тематике, но при этом сохранились структура и логика пособия. В результате сократился объем текста, а материал стал более доступным и понятным.

Одним из важных и достойнейших призваний И.Гарияна является педагогическая деятельность. Около 50 лет он преподавал на факультете истории ЕГУ, где, благодаря ему, студенты приобщались к прошлому Армении и деятельности знаменитых археологов. Долгие годы И.Гариян преподавал студентам предметы по специальности «Средневековая археология Армении», «Керамика средневековой Армении», «Города и крепости средневековой Армении», «История первобытного общества» и «История археологии». Его лекции всегда выделялись своей логичностью и доступностью. Студенты его любили и уважали за беспристрастность, справедливую строгость и требовательность. На сегодняшний день многие видные деятели в области археологии, этнографии, истории, а также управления государством прошли археологическую школу И.Гарияна. Десятки молодых ученых вошли в научную среду под руководством И.Гарияна. Он также был оппонентом многочисленных кандидатских и докторских диссертаций. Ученый рецензировал, а также редактировал ряд работ по специальности. И.Гариян является членом специального совета по присуждению научных степеней при Институте Археологии и Этнографии, а также членом научного совета научно-исследовательского центра Историко-культурного наследия и Межведомственного совета Министерства культуры.

Многоуважаемый ученый перешел на заслуженный отдых в сентябре 2017 года. Тем не менее все его коллеги ждут от И.Гарияна новых, интересных исследований.

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ГАРИБЯНА ИГИТА ГАРЕГИНОВИЧА

1937 г. – 1-го декабря родился в селе Меградзор, Котайкского марза

1957–1960 гг. – Служил в Советской Армии

1959 г. – Участвовал на собрании отличников вооруженных сил СССР в Москве и был награжден почетной грамотой.

1960–1965 гг. – Учился на историческом факультете ЕГУ

1962–1965 гг. – Получил стипендию имени А. Манандяна.

1965–1968 гг. – Учился в аспирантуре ЕГУ

1963–1964 гг., 1966–1968 гг. – Участвовал в работах археологических экспедиций Лчашена, Гарни, Армавира и Двина.

1966–1974 гг., 2009–2015 гг. – Руководил археологической экспедицией города-крепости Лоре

1968 г. – Начал работать на историческом факультете ЕГУ, на кафедре Археологии, этнографии и источниковедения в качестве преподавателя

1969–1980 гг. – Руководил раскопками монастырского комплекса Таннат

1970 г. – Была присуждена степень кандидата исторических наук

1978–1980 гг. и 2003–2009 гг., 2012 г., 2014 г. – Возглавлял раскопки крепости Бджни

1996 г. – Была присуждена степень доктора исторических наук

- Բ 105 Հ/Մ/Հ*
- 1998–2017 гг. – Член комиссии по присуждению степеней
Института археологии и этнографии НАН РА
- 2000 г. – Был избран академиком международной академии наук
“Природа и общество”
- 2001 г. – Член научного совета научно-исследовательского центра
историко-культурного наследия
- 2000–2002 гг. – Занимал должность профессора кафедры
археологии в ЕГУ
- 2001–2005 гг. руководитель кафедрой Археологии в ЕГУ
- 2005–2010 гг. заведующий кафедрой Археологии и этнографии
ЕГУ
- 2005 г. – ВАК-ом было присуждено звание профессора
- 2005 г. – Член межведомственной комиссии Министерства
культуры
- 2007 г. – Был награжден золотой медалью ЕГУ
- 2009 г. – Был награжден медалью Мовсеса Хоренаци
- 2014 г. – Возглавлял работы по очистке и раскопкам церкви
Тежаруйк (Меградзор)
- 2018 г. – Был награжден золотой медалью министерства
образования и науки РА
- 2018 г. – Ушел на заслуженный отдых.

**ԱՃԻԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԺԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ
ՑԱՆԿ՝ ԵԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐՈՎ**
ХРОНОЛОГИЧЕСКИЙ СПИСОК ТРУДОВ С АННОТАЦИЯМИ

1964

1. Դատավարական կարգը, ընտանեկան և ժառանգական իրավունքը ըստ Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագրքի», Ուսանողական գիտական տեղեկագիր, №10, պրակ 1, Երևան, 1964, 3-13:

**Процессуальный порядок, семейное и наследственное право согласно «Армянскому Судебнику» Мхитара Гоша,
Студенческие научные известия, 1964, №10, часть 1, 3-13.**

Հոդվածը վերաբերում է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» սահմանված դատավարական կարգի (անձնական խոստովանություն, վկանների ցուցմունքներ, երդում) ընտանեկան (ամուսինների անձնական և գույքային հարաբերություններ, ամուսնալուծություն) և ժառանգական (կտակ, առանց կտակ) իրավունքի կանոններին: Օրենքները ներկայացված են որոշակի պարզաբանումներով: Համառոտ անդրադարձ է կատարված մինչ «Դատաստանագիրը» գործող դատավարական կարգին և Մխիթար Գոշի կենսագրությանը:

1965

2. О наличии двух урартских крепостей – городов, находящихся на территории холмов Армавира и с. Давида, *Тезисы докладов XI всесоюзной археологической студенческой конференции, Ереван, (1965), 38.*

Արմավիր և ս. Դավիթ բլուրների տարածքում ուրարտական երկու ամրոց-քաղաքների առկայության մասին, *Համամիութենական ուսանողական հնագիտական XI կոնֆերանսի թեսականներ, Երևան, (1965), 38:*

Հիմնադրույթում քննարկվող հարցադրմանը սեպագիր արձանագրությունների և պեղումների արդյունքների հայտնի տվյալները բավարար չհամարելով, հեղինակը Արմավիր և ս. Դավթի բլուրների վրա

ուրարտական քաղաքների գոյության հարցի ճշգրիտ պատասխանը ակնկալում է հետագա պեղումների արդյունքներից:

1968

3. Северные походы урартских царей и основание

Аргиштихинили, Сборник докладов на IX и X всесоюзных археологических студенческих конференциях, Москва, (1968), 16–22.

Ուրարտական թագավորների հյուսիսային արշավանքները և Արգիշթիխնիլիի եիմնադրումը, *Համամիութենական հնագիտական ուսանողական IX և X գիտաժողովների զեկուցումների ծողովածու, Մոսկվա, (1968), 16–22:*

Համառոտ շարադրված է 1962–1964 թթ. Արգիշթիխնիլիի պեղումները, որի ընթացքում Արմավիր բլուրի վրա բացվել են ամրոցի պարիսպները և խոշոր շինություններ: Տրված է Արգիշթիխնիլիի պատմությունը ուրարտական պետության անկումից հետո՝ որպես Երվանդյան հարստության Արմավիր մայրաքաղաք: Հողվածում ներկայացված են քաղաքի մասին Մովսես Խորենացու այն տեղեկությունները, որոնք հաստատվել են պեղումների արդյունքներով:

4. Անիի վերջին թագավորը, Գարուն, գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր, 9 (1968), 75–80:

Последний царь Ани, Гарун, литературно-художественный, общественно-политический ежемесячник, 9 (1968), 75–80:

Պատմական աղբյուրների օգտագործմամբ ներկայացված է 11-րդ դարի առաջին կեսում Հայաստանում տիրող իրավավիճակը, Բագրատունյաց թագավորության անկումը, կենտրոնական և կենտրոնախոյզ երկու կուսակցությունների հակամարտությունը: Ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակում Գագիկ II թագավորի գահից պարտադրմամբ երաժարվելը, փոխարենը Կապաղովկիայում նոր տիրույթներ ստանալը, թագավորությունը վերականգնելու համար նրա ձեռնարկած փորձերը, դավադրաբար սպանությունը և Կիլիկիայի իշխան Թորոս Ռուբինյանի Գագիկ արքայի մահվան համար Վրեժիսնդիր լինելը:

**5. Լոռե քաղաքը մատենագրության մեջ, ԲԵՀ, 1 (1968),
209–214:**

Город Лорэ по письменным данным, ВЕУ, 1 (1968), 209–214.

Հոդվածում քննարկված են Կյուրիկյան հարստության մայրաքաղաք Լոռե քաղաք-ամրոցի հիմնադրման և քաղաքական պատմության հարցերը՝ մինչև XVIII դարի երկրորդ կեսը։ Որպես աղբյուրագիտական հենք օգտագործվել են հայկական և վրացական աղբյուրները, ինչպես նաև ճանապարհորդների ուղեգրությունները։ Հանգամանութեն ներկայացված է Կյուրիկյան թագավորության կյանքում վրաց արքունիքի ունեցած դերը, օտար տիրակալների և նվաճողների պատմությունը։

1969

**6. Լոռե քաղաքի մատուռ դամբարանը և նրա կավանոթները,
ՊԲՀ, 2 (1969), 194–198**

**Усыпальница городища Лорэ и ее керамика. ИФЖ, 2 (1969),
194–198.**

Ներկայացված են 1967 թ. կատարված պեղումների արդյունքները։ Միջնաբերդում պեղվել է ըստ ավանդության Դավիթ Անհողին թագավորի կնոջ դամբարանը համարվող մատուռ։ Վերջինս ճանապարհորդների և տեղագիրների կողմից նկարագրվում է որպես սրբատաշ քարերով երեսպատված, կամարակապ, գմբեթածածկ, քառակուսի հատակագծով շինություն։ Պատերի միջնալիցքից հայտնաբերված XI–XII դդ. թվագրվող խեցանոթներով և 1251 թվականը կրող եղծված արձանագրությունը հիմք ընդունելով հեղինակը շենքը թվագրվել է XII դ. վերջ – XIII դ. առաջին տասնամյակով։

7. Լոռե քաղաքի պեղումները, ԲԵՀ, 1 (1969), 265–268:

Раскопки города Лорэ, ВЕУ, 1 (1969), 265–268.

Հոդվածում քննարկվում է Լոռե քերդաքաղաքի բնական դիրքը, պահպանված շինությունները, պեղված կառույցները, բացված շերտերի կառուցվածքը և հզորությունը։ Նախնական պեղումների արդյունքներով առանձնացվել են ամրոցի զարգացման երկու փուլեր՝ XI–XIII դդ. և XIV–XVIII դդ.։

8. Լոռե քաղաքը և նրա պեղումները, УՀ, 1 (271), հունվար (1969), 36–37:

Город Лорэ и её раскопки, СА, 1 (271), январь (1969), 36–37:

Գիտական ամառատչելի հոդվածում շարադրված է Կյուրիկյան թագավորության կազմավորման գործընթացը, պետության պատմությունը, մայրաքաղաքի անստիկ և շահեւկան դիրքը, ինչպես նաև առևտրական տարանցիկ ճանապարհների վրա գտնվելու հանգամանքը: Հակիրճ ներկայացված են Լոռեում կատարված ուսումնասիրությունների սկզբնական արդյունքները, պեղված առաջին շինությունները:

9. Անիի վերջին թագաւորը, «Հուսաբեր», քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ, մաս Ա, թիւ 230, 3 հունվար; մաս Բ, թիւ 232, 7 հունվար, ԾԴ տարի, Բեյրութ:

Последний царь Ани, «Усабер» политическая, экономическая и литературная ежедневная газета, часть I, № 230, 3 января; часть II, № 232, 7 января, 54-ий год, Бейрут.

Տե՛ս սույն ցուցակի թիվ 4:

1970

10. Լոռե ամրոցի պեղումները, ԲԵՀ, 3 (1970), 250:

Раскопки крепости Лорэ, ВЕУ, 3 (1970), 250.

Հաղորդումը նվիրված է Լոռե բերդ քաղաքի 1970 թ. պեղումներին, որի արդյունքները կարևոր էին հուշարձանի XIV–XVII դդ. պատմության ուսումնասիրության համար: Հայտնաբերված նյութական մշակույթի նմուշները վկայում են, որ այդ ժամանակահատվածում Լոռեն ունեցել է տեղական արտադրություն, պահպանել վարչական և առևտրական կենտրոնի իր դերը: Պեղաշրջանի կարևոր գտածոներից են աշխարհիկ թեմաներով որմնանկարները և շատրվանով ջրավազանները:

11. Крепость-город Лорэ и её раскопки. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1970, 21 стр.

- **Լոռե բերդ-քաղաքը և նրա պեղումները, Սեղմագիր պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, (1970), 21էջ:**

Աշխատանքը քաղկացած է առաջարանից, երկու բաժիններից և եզրակացություններից: «Լոռե քաղաքը Հայաստանի պատմությունում» վերտառությամբ առաջին բաժինը քաղկացած է երկու գլուխներից: Առաջին գլխում շարադրված է Գուգարաց աշխարհի պատմությունը, իին ժամանակներից՝ ներառյալ Բագրատունյաց թագավորության շրջանը: Երկրորդը գլխում ներկայացված է Կյուրիկյան թագավորության կազմավորման, Լոռե քաղաքի հիմնադրման, կառուցապատման, Զաքարյանների և նվաճողների՝ վրացիների, թաթար-մոնղոլների, պարսիկների, թուրքերի տիրապետության պատմությունը:

Ատենախոսության երկրորդ բաժինը քաղկացած է երեք գլխից: Գլուխ երրորդում պատմիչների, տարեգիրների, տեղագիրների, ճանապարհորդների տեղեկությունների հիման վրա շարադրված է Լոռե քաղաքի ուսումնասիրության պատմությունը: Չորրորդ գլուխը նվիրված է ճարտարապետական կառույցների ուսումնասիրությանը: Ներկայացված են միջնաբերդի «քաղաքացիական շինություն»-ը, բաղնիքները, շատրվանով ջրավազանները, բնակելի թաղամասը, մատուռ-դամբարանը: Վերջին գլխում քննարկվում են կավից, ապակուց, ոսկրից պատրաստված հնագիտական գոտածոները:

1971

12. Գլաձորի համալսարանի հնագիտական պեղումները, ԲԵՀ, 2 (1971), 251–260:

Археологические раскопки Гладзорского университета, ВЕУ, 2 (1971), 251–260.

Հոդվածը նվիրված է Գլաձորի համալսարանի տեղադրությանը: Քննարկելով եղած կարծիքները, հիմք ընդունելով այն փաստը, որ համալսարանը գտնվել է Պոռշյանների տիրույթում, իսկ հոգևոր կենտ-

բոնը կոչվել է ս. Ստեփանոս, պեղումները են կատարվել նոյնանուն եկեղեցի ունեցող Թանահատի վանական համալիրի տարածքում: Հայտնի և պեղումներով բացված բազմաթիվ արձանագրությունները, որոնց թվում մեծ էին նվիրատվական բովանդակություն ունեցողները, Գլածորում դասավանդած անձանց տապանաքարերով տապանատան, աշխատասենյակ-խցերի, տնտեսական և այլ օժանդակ շինությունների առկայությունը, վկայում են, որ համալսարանը գործել էր Թանահատի վանական համալիրի տարածքում:

1977

13. Կյուրիկյան թագավորության հոչակման տարեթվի շուրջը, ԲԵՀ, 1 (1977), 78–87:

Относительно даты провозглашения кюрикянского царства, ВЕУ, 1 (1977), 78–87.

Խ դարում Վասպուրականում, Կարսում, Սյունիքում և Գուգարքում կազմավորվում են Անիի Բագրատունիներից կախված ավատատիրական թագավորություններ: Հոդվածում քննարկվում է Գուգարքում գտնվող Տաշիր-Զորագետի կամ հիմնադիր արքայի անունը՝ Կյուրիկյան թագավորության կազմավորման տարեթիվը: Հեղինակը օգտագործելով ձեռագիր մատյանների հիշատակարանները, պատմիչների տեղեկությունները և պատմաբանների աշխատանքները թագավորության հոչակման համար հավաստի է համարում 979 թվականը:

14. Արամերեն արձանագրություն. Նորահայտ հուշարձաններ Սպիտակի շրջանում, ՍՀՀ, (1977), 17 հունիսի (համահեղինակ Ա. Քալանթարյան, Գ. Սարգսյան):

Арамейская надпись. Новонайденные памятники в районе Спитака, “Советская Армения”, (1977), 17 июня (167) (соавторы А. Калантарян, Г. Саргсян).

Հանրամատչելի հոդվածը նվիրված է Սպիտակ քաղաքի մերձակայքում արամեական սահմանաքարի հայտնաբերման հանգամանքներին և բնագրի վերծանությանը: Ներկայացված են նաև քաղաքից 10 կմ արևմուտք գտնվող արհեստական ժայռափոր քարանձավներից բաղկացած բնակավայրի պեղումների նախնական արդյունքները:

1978

15. Լոռե, Լոռի, Միջնադարյան քաղաք-ամրոց, ՀՍՀ, հատոր 4 (1978), 662–663:

Лоре, Лори, город-крепость средневековья, АСЭ, том 4, (1978), 662–663.

Հակիրճ ներկայացված է քաղաք-ամրոցի հիմնադրման, հետագա զարգացման, Կյուրիկյան հարստության մայրաքաղաք Իոչակվելու, պեղումներով բացված շինությունների, տնտեսական կառույցների, կենցաղային նշանակության շինությունների, Միջնադարյան գտածոների մասին տվյալներ։ Լոռեն ներկայացված է որպես հյուսիսային Հայաստանի առևտրա-արհեստագործական կարևոր կենտրոն։

16. Պեղումներ Բջնի ամրոցում, ՍՀայ., 2 (17350), 3 հունվար (1978):

Раскопки крепости Бжни/Бджни, “Советская Армения”, 2 (17350), 3 январь (1978).

Բջնի ամրոցի պեղումները լուսաբանող հաղորդման մեջ ներկայացված են պատմական տեղեկություններ, պեղումներ կատարելու նպատակը և ընթացքը, հայտնաբերված ճարտարապետական հուշարձանները, գտածոներից՝ կենդանական ճարպով լի կճունը, տեղական և ներմուծված խեցեղենը։

1979

17. Խութըլու Բուղա Արծրունի, ՀՍՀ, հատոր 5 (1979), 99:

Хутгу Буга Арцруни, АСЭ, том 5, (1979), 99.

Մատենագիտական և վիմագրական վկայությունների հիման վրա շարադրված է է XIII դ. հայ-վրացական պետական գործիչ Խութըլու Բուղա Արծրունու կյանքն ու գործունեությունը։

1981

18. Բջնի ամրոցի պեղումները, Հայկական ՍՍՀ

1979–1980 թթ. հնագիտական դաշտային աշխատանքների արդյունքներին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեղիսներ, Երևան, (1981), 38–39:

Раскопки крепости Бджни, Тезисы докладов конференции, посвященной результатам полевых археологических работ, Ереван, (1981), 38–39.

Հիմնադրութում ներկայացված են ամրոցի պատկանելության և գոյատևման ժամանակաշրջանները: Պեղումներով բացված աշխարհիկ և կրոնական շինությունների թվագրությունը կատարվել է հնագիտական նյութով և կառուցողական տեխնիկայի առանձնահատկություններով:

1983

19. Գլաձոր(տեղադրությունը, պեղումները և վիմագիր արձանագրությունները), Երևան, (1983), 244 էջ:

Гладзор (Локализация. Раскопки. Эпиграфика), Ереван, (1983), 244 стр..

Աշխատանքը բաղկացած է առաջարանից, երեք գլխից, արձանագրությունների լուսանկարներից, սկզբնադրյուրների և օգտագործված գրականության ցանկերից, անձնանունների, տոհմանունների, տեղանունների, հուշարձանների, եկեղեցական տոնների անվանումների ցուցակներից:

Առաջին՝ «Գլաձորի համալսարանի տեղադրությունը և պեղումները» գլխում քննության է առնվել համալսարանի տեղադրության վերաբերյալ եղած կարծիքները: Այդ կարծիքների և մատենագիտական տեղեկությունների համադրմամբ հստակեցվել է համալսարանի թանահատ/թանատ վանական համալիրի տարածքում գտնվելու փաստը: Պեղումներով բացված շինությունները, արձանագիր տապանաքարերը ևս հաստատում են Գլաձորի համալսարանի թանահատի վանական համալիրում գործելու իրողությունը: Պոռշյան իշխանական տան հովանավորությամբ համալսարանը հիմնադրել է Ներսես Մշեկեսաստեսագիտութեանը:

ցին, իսկ դասավանդել են ժամանակի անվանի մտածողները։ Ի տարբերություն Թանահատի, Գլաձոր անվանումը հանդիպում է միայն մատենագիտության մեջ։ Համալսարանը իր գործունեության շուրջ 60 տարիներին տվել է միջնադարյան բազմաթիվ հայտնի մտածողներ, որոնք հետագայում Հայաստանում հիմնել են այլ գիտառուսումնական կենտրոններ։

Երկրորդ գլխում (*Պեղումներով հայտնաբերված հնագիտական առարկաները*) քննարկվում են մետաղից (դաշույն, բահ, մկրատ, խաչ, խնկաման, ծխամորճ), քարից պատրաստված գործիքները և առարկաները։ Խեցեղեն արտադրանքից ներկայացված են հասարակ, ջնարակապատ և հախճապակուց պատրաստված անոթները, առանձին ներկայացված են կճումների, կարասների, քրեղանների, ձիթաճրագների, ծխամորճների տեսակները։

Ուսումնասիրության երրորդ գլուխը վերնագրված է «Թանահատ-Գլաձորի վանական համալիրի և մերձակայքի վիմական արձանագրությունները»։ Մանրամասն ներկայացված են նորահայտ արձանագրությունների գտնվելու վայրը, լուսանկարը, գծանկարը, առկա են մանրամասն ծանոթագրություններ։ Հայտնի արձանագրությունների համար տրվում է գրականության ցանկ։ Վիմական արձանագրությունների վերլուծությունը նպաստում է աղբյուրագիտական և պատմագիտական կոնկրետ հարցերի ճշգրտմանը։ Համալսարանի հեղինակության մասին են հավաստում այդ տարիներին վանական համալիրին արված նվիրատվությունները հիշատակող արձանագրությունները։

20. Բրոնզե կանթեղ Գլաձորից, ԱՀ, 10 (1983), 21–23:

Бронзовый светильник из Гладзора, СА, 10 (1983), 21–23.

Հողվածում ներկայացված է Գլաձորի համալսարանի տարածքից հայտնաբերված Քրիստոսի կյանքի դրվագների պատկերներով բրոնզե կանթեղը։

21. Գլաձորի համալսարանի պեղումները, Գիտություն և տեխնիկա, 9 (1983), 25–31:

Раскопки Гладзорского университета, “Наука и техника”, № 9, (1983).

Հանրամատչելի ձևով ներկայացված են Գլաձորի համալսարանի հիմնադրման, գործունեության, մատենագիտական հիշատակությունների, պեղումներ սկսելու, հայտնաբերված նյութերի, ժանահատ վանական համալիրի եկեղեցիների մասին տեղեկություններ:

1984

22. Պատմության վկաները, Ավանգարդ, 125 (1984), 14 հոկտեմբեր:

Свидетели истории, Авангард, (125) 14 октября, (1984).

Գլաձորի համալսարանի 700-ամյակին նվիրված հոդվածում շարադրված են տվյալներ հուշարձանի տեղադրության, գրավոր աղբյուրների, պեղումների վայրի ընտրության, բացված կառույցների նշանակության և թվագրության, նորահայտ վիմագրերի վերծանության վերաբերյալ:

1987

23. Ուշ բրոնզեդարյան նորահայտ դամբարան Մելրաձոր գյուղի տարածքում, ԲԵՀ, 2 (1987), 117–124 (համահեղինակ L. Բիյագով):

Найденное погребение эпохи поздней бронзы из села Меградзор, ВЕУ, 2 (1987), 117–124 (соавтор Л.Биягов).

Հոդվածը նվիրված է Հրազդանի տարածաշրջանի Մելրաձոր գյուղում պատահարար բացված քարարկղային դամբարանի նյութերի ուսումնասիրությանը: Ավերված դամբարանից հայտնաբերվել են սափորներ, կճուճ, կեռնոս, հենակ, քրեղաններ՝ մեկը ընկույզի կեսի տեսքով, տարատեսակ ուլունքներ և բրոնզե թոշնաքանդակ: Հայտնաբերված խեցեղենը թվագրվում են մ.թ.ա. XIII–XII դդ: Հավաքածուում եղած ավելի վաղ թվագրում ունեցող իրերի առկայությունը բացա-

տրվում է տարածաշրջանի աշխարհագրական առումով մեկուսացված լինելու հանգամանքով:

1988

24. Միջնադարյան Հայաստանի խնկամանները, ԲԵՀ, 1 (1988), 110–120 (համահեղինակ, Ն. Հակոբյան, Հ. Մելքոնյան):

Курильницы средневековой Армении, ВЕУ, 1 (1988), 110–120 (соавторы Н.Акопян, Г. Мелконян).

Հոդվածում քննարկվում են եկեղեցական արարողություններում խնկարկելու համար օգտագործվող սպասք՝ բուրվառներն ու խնկամանները: Տրված են այդ ծիսական առարկաների տարրերակման, պատրաստման և օգտագործման եղանակներն ու ձևերը, խնկամյութերի տեսակները: Խնկամանները ձուլածո են, զարդարված հիմնականում Քրիստոսի կյանքը պատկերող դրվագներով: Քննարկվում է նաև խնկամանների պատրաստման կենտրոնների և դրանց մասին եղած կարծիքները: Հայաստանում այդ իրերի պատրաստման հավանական կենտրոններ են համարվում Անին և Տաթևը: Հայտնաբերված խնկամանները պատկերագրությամբ նման են X–XIII դդ. հայ քրիստոնեական արվեստի նմուշներին:

1995

25. Թանահատ-Գլաձորից հայտնաբերված մետաղեառարկանները, ԲԵՀ, 1(1995), 78–92:

Металлические предметы, обнаруженные в Танаат-Гладзорском монастырском комплексе, ВЕУ, 1 (1995), 78–92.

Հոդվածում ուսումնասիրվում են Թանահատ-Գլաձորից մեկական օրինակով հայտնաբերված մետաղեառարկանները՝ դաշույն, բահ, մկրատ, խաչ, զանգ, կողպեք: Նյութերը քննարկվել և թվագրվել են Հայաստանի միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված զուգահեռներին հետ համեմատելու եղանակով: Նշված են ուսումնասիրվող իրերի պատրաստման հնարավոր կենտրոնները:

Մանրամասն քննարկված է հայտնաբերված բուրվառի պատկերները, պատրաստման կենտրոնների հարցը, թվագրությունը, կարծիք է հայտնվում իրերի հայկական ծագում ունելու մասին:

1996

26. Թանահատ-Գլածոր (Տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները), Մեղմագիր, Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման առենախտություն, Երևան, (1996), 35 էջ:

Танаат-Гладзор (Локализация, раскопки, эпиграфические надписи), Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, (1996), 35 стр..

Տե՛ս սույն ցուցակի թիվ 19:

1999

27. Հայաստանում հայտնաբերված կավե ծխամորների թվագրման հարցի շուրջ, ԲԵՀ, 2 (1999), 99–107:

К вопросу о датировке обнаруженных в Армении глиняных курительных трубок, ВЕУ, 2 (1999), 99–107.

Կավե ծխամորների տեսականին ենթարկվել է ձևաբանական խմբավորման, բաժանումը կատարվել է՝ հիմք ունենալով նախշագրդումը: Բաժանվել է չորս տեսակի և փորձ է արվել թվագրելու: Զուգահեռաբար ներկայացվել են Ըուսաստանում և Բուղարիայում հայտնաբերված ծխամորների մասին եղած կարծիքները:

2000

28. Լոռի բաղար-ամրոցի միջնադարյան բաղնիքները, ԲԵՀ, 2 (2000), 100–110:

Средневековые бани города-крепости Лори, ВЕУ, 2 (2000), 100–110.

Ուսումնասիրությունը նվիրված է Լոռի բերդաքաղաքի տարածքում հայտնաբերված միջնադարյան երկու բաղնիքներին: Մանրամասն նկարագրված են բաղնիքների բաժանմունքները՝ հանդերձարանը, լողասրահը, ջեռուցարան-հնոցը, տաք և սառը ջրերի ավազանները, ջուր մատակարարող և հեռացնող վտորակները, դրանց անկենսաստեսագիտությունը:

վտանգությունը ապահովելու համար կողքերին դրված սալերը: Բաղ-նիքների ներքին հարդարանքում օգտագործվել են տարբեր գույների ջնարակապատ սալիկներ, տարությունը ապահովել են նաև սենյակների և դռների միջտ դասավորության միջոցով: Ծածկը իրականացվել է գմբեթների և թաղերի միջոցով: Բաղնիքները կառուցվել են ԺԱ-ԺԳ դարերում Կյուրիկյան-Զաքարյան տիրապետության ժամանակ:

2001

29. Թանահատի գլխավոր եկեղեցու անվանակոչության հարցի շուրջ, Հայաստանի Սրբերը և Սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան (2001), 114–121:

О вопросе наименования главной церкви Танаата, Святые и Святыни Армении, Сборник статей, Ереван, (2001), 114–121.

Քննության է առնվել Թանահատի վանական համալիրում սր. Ստեփանոս անունը կրող եկեղեցու կառուցման թվականը և անվան պատկանելությունը: Հիմնվելով պատմիչների և ուսումնասիրողների աշխատանքների, հնագիտական պեղումների և վիմագիր արձանագրությունների արդյունքների վրա, քննության է առնվել վանական համալիրի եկեղեցիների և մատուտի կառուցման, հիմնադրման տարեթվերի, վերականգնման, ինչպես նաև անվանումների հետ առնչվող հարցերը: Արդյունքում հստակեցվում է, որ վանական համալիրի տարածքում երկու եկեղեցներից մեկը անվանակոչվել է Ստեփանոս նախավկայի, իսկ մյուսը՝ VIII դ. Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցու պատվին:

2002

30. Միջնադարյան Հայաստանի շատրվանող ջրավազանները, Անիի Սայր տաճարի օծման 1000-ամյակը, թեզիս, Օշական (2002), 22–23:

Фонтанирующие бассейны средневековой Армении, 1000-летие помазания Кафедрального Собора в Ани, тезис, Ошакан, (2002), 22–23.

Հիմնադրույթում ներկայացված են Լոռի բերդի պեղումների ընթացքում բացված շատրվաններ ունեցող երկու ջրավազանները: Հակիրճ շարադրված են տեխնիկական այն հնարքները, թե ինչպես է ջուրը ինքնահոս շատրվանել: Նկարագրված է շատրվաններին ջուր մատակարարող համակարգը:

2003

**31. Բջնի ամրոցի պեղումների նախնական
արդյունքները, Հայագիտության արդի վիճակը և
զարգացման հետանկարները, Զեկուցումների
թեզիսներ, Երևան (2003), 53–54:**

**Фонтанирующие бассейны средневековой Армении,
1000-летие помазания Кафедрального Собора в Ани,
тезис, Ошакан, (2002), 22–23.**

Հիմնադրույթում հակիրճ շարադրված է Բջնի ամրոցի հիմնադրման, կառուցապատման վերելքի և անկման ժամանակաշրջանները: Թվարկված են պեղումներով բացված հոգևոր և աշխարհիկ կառույցները, գտածոների տեսակները:

**32. Հովանավանք ու Մուղնու Ս. Գևորգը ըստ
Զաքարիա սարկավագի, Արագածոտն Հոգևոր և
մշակութային ժառանգություն, գիտաժողովի
հիմնադրույթները Օշական (2003), 53–54:**

**Ованнаванк и церковь Св. Геворга в Мугни согласно
диакону Закарии, Духовное и культурное наследие
Арагацотна, Тезисы конференции, Ошакан, (2003),
53–54.**

Հիմնադրույթում քննության է առնված Զաքարիա Սարկավագի (Զաքարիա Քանաքեռցի) «Պատմություն» աշխատությունը, որպես հավաստի և կարևոր աղբյուր, որը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հովանավանքի և Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու կառուցման մասին: Աշխատությունը կարևոր է նաև նշված հուշարձանների վիմագիր արձանագրությունները վերծանելու համար:

33. Գրիգոր Լուսավորչի Աջը, ՔՀ (Երկշաբաթերք, Մայր Աթոռ սր. Էջմիածին), (2003), հուլիս Ա, թիվ 13(153), հուլիս Բ, թիվ 14(154), օգոստոս Ա, թիվ 15(155), օգոստոս Բ, թիվ -16(156), սեպտեմբեր Ա, թիվ 17(157):

Правая рука Григория Просветителя, ХА (двухнедельник Кафедральный Собор Св. Эчмиадзина), (2003), июль, I, номер 13 (153), июль II, номер 14 (154), август I, номер 15 (155), август II, номер 16 (156), сентябрь I, номер 17 (157).

Հայ եկեղեցու պաշտելի մատոնքներից է օրինության նշան ցույց տվող մատոնքով, աջ բազուկի տեսքով, արծաթից պահարան-մասնատուփը, որ տեղադրված են Գրիգոր Լուսավորչի Աջի մատոնքները: Աջի կարևորությունը այն է, որ փաստորեն կնիքի դեր է կատարում սր. Էջմիածնում: Կաթողիկոսները կոնդակները մակագրում են սուրբ Աջի օրինությամբ, նվիրագործում են սուրբ մետոնը, ձեռնադրում են եպիսկոպոսներին: Այս առումով սր. Աջը պետք է միշտ գտնվի կաթողիկոսարանում: Ժամանակի ընթացքում մատոնքը գերեվարվել է, գողացվել և փրկագնվել, բայց ի վերջո վերադարձվել է կաթողիկոսարան: Այժմյան տեսքը, ստացել է 1657 թ. նորոգումից հետո: Հոդվածը շարադրված է մատենագիտական հիշատակությունների օգտագործմամբ:

34. Մորից ֆոն Կոցեбуն Ս. Էջմիածնի և Երևանի մասին (Մորից ֆոն Կոցերուի ճանապարհորդական նոթագրությունը Ս. Էջմիածնի և Երևանի մասին), ՔՀ, (Երկշաբաթերք, Մայր Աթոռ սր. Էջմիածին), (2003), հոկտեմբեր Ա, թիվ 19(159), հոկտեմբեր Բ, թիվ 20(160), նոյեմբեր Ա, թիվ 21(161), նոյեմբեր Բ, թիվ 22(162):

Мориц фон Коцебу о Св. Эчмиадзине и Ереване (Записи путешественника Морица фон Коцебу о Св. Эчмиадзине и Ереване), ХА (двухнедельник, Кафедральный собор Св. Эчмиадзина), (2003), октябрь I, номер 19 (159), октябрь II, номер 20 (160), ноябрь I, номер 21 (161), ноябрь II, номер 22 (162).

Հոդվածում քնննարկվում է 1817 թ. Ալեքսանդր Ա-ի հրամանով կազմված գեներալ Երմոլովի Պարսկաստան ուղարկվող դիվանագիտական պատվիրակության անդամ Մորից ֆոն Կոցերուի ուղեգրու-

թյունը: Առաքելության ճանապարհի մի մասը անցել է Հայաստանի տարածքով և Մորից ֆոն Կոցերուն մանրամասն նկարագրել է բնությունը, վանքերը՝ մասնավորապես Էջմիածնի վանական համալիրը: Շարադրված է նաև պարսիկների անմարդկային վերաբերմունքը, ծանր հարկերն ու տուգանքները, կյանքի անտանելի պայմանները, որ ստեղծված էին վանքի միաբանների և կաթողիկոսի համար: Ուղեգրությունում համարյա տեղեկություններ չկան իայ բնակչության մասին: Նկարագրված է Երևանի բերդը, նրա կառույցները: Որպես պատվիրակության անդամ հիմնականում շփվելով պարսկական վերնախավի հետ հանգամանալից ներկայացնում է նրանց կենցաղը, հանդիսավոր ընդունելությունների արարողակարգին վերաբերվող մանրամասները, պաշտոնյանների և թիկնազորի հագ ու կապը, սպառագինությունը:

35. Հրաշագործ Սուրբ Գեղարդ, Երևան, (2003), 64 էջ:

Чудотворный Св. Гехард, Ереван, (2003), 64стр..

Ուսումնասիրությունը նվիրված է Հայ Առաքելական եկեղեցու մասունքներից Սուրբ Գեղարդին և նրա մասնատուիքին: Համաձայն ավանդության Փրկչի ավագ աշակերտներից Թաղետս առաքյալը այն գեղարդը, որը հոռմեացի զինվորը միսրմել էր խաչված Տիրոջ կողը և փշե պսակը բերում է Եղեսիա քաղաք՝ Արգար թագավորին բուժելու համար: Բժշկված թագավորը որպես երախտագիտություն մկրտվում է, իսկ Սուրբ Գեղարդը մնում է Հայաստանում: Աշխատանքում մատենագիտական տեղեկությունների օգտագործումով քննարկված է Սուրբ Գեղարդի պատմությունը մինչև մեր օրերը, ներկայացված է նրա հրաշագործ-բուժող նշանակությունը, որը ընդունում էին նաև օտարազգի այլադավանները: Տեղեկություններ են տրված մասունքի պահարանի պատրաստման և նորոգման մասին: Նկարագրված է նաև երկրորդ գեղարդի ծագման և Վատիկանում հանգրվանելու պատմությունը: Աշխատանքը շարադրված է գրավոր աղբյուրներից քաղված բազմաթիվ մեջբերումներով:

36. Հրաշագործ Սուրբ Գեղարդը, Էջմիածին, Գ-Դ (2003), 103-125:

Чудотворный Св. Гехард, Эчмиадзин, III-IV(2003), 103–105.

Տես սույն ցուցակի թիվ 35:

2004

37. Բջնի միջնադարյան ամրոցի պեղումները, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Զեկուլումների ժողովածու, Երևան, (2004), 228-236:

Раскопки средневековой крепости Бджни, Современное состояние арменоведения и перспективы развития, Сборник докладов, Ереван, (2004), 228–236.

Ըստհանրացնող բնույթի հոդված է, ներկայացված է Բջնի բնակավայրի մասին եղած հնագիտական, մատենագիտական, պատմական տեղեկությունները, պեղումների պատմությունը, հնավայրի նկարագրությունը, միջնաբերդի ճարտարապետական հուշարձանները, թվարկված են հայտնաբերված հնագիտական գտածոների տեսակները:

38. Լոռի բերդ-քաղաքի շատրվանող ջրավազանները,
Գիտելիք, 14 (2004), 30–35, 15 (2004), 17–24:

Фонтанирующие бассейны крепости-города Лори, Гителик, 14 (2004), 30–35, 15, (2004), 17–24.

Շարադրված են ավագանների շինարարության, հարդարանքի, պատերի անջրանցիկ սվաղի, երեսպատման ջնարակապատ սալիկների, ջուր մատակարող և հետացնող կավե փողբակների, դրանց անվտանգությունը ապահովող ծածկի, ջրի շիթը դեպի վեր ուղղորդող կավե կոնքի, տուֆից սալերի, շատրվանի այունաձև հատվածի մանրամասն նկարագրությունը և շատրվանի աշխատանքի տեխնիկական հնարքները: Հետաքրքիր այս կառույցները գործել են XI-XIII դժ. ընթացքում, նորոգվել են, իսկ հետագայում վերակառուցվել:

39. Lori Berd—the Fountain-pools of the Town, Gitelik/Knowledge, Educational, Popular Sciensce and Teaching Methodology Magazine for Students and Teachers, Yerevan, №14 (2004)

30–35 Lori Berd—the Fountain-pools of the Town, Gitelik/Knowledge, Educational, Popular Sciensce and Teaching Methodology Magazine for Students and Teachers, Yerevan, №15 (2004), 17–24:

Տես՝ սույն ցուցակի թիվ 38, անգլերեն տարբերակ:

40. Հայագիտությունը հարստացնող աշխատություն, գրախոսություն, ՔՀ, 24 Բ, դեկտեմբեր (2004) (համահեղինակ Պ. Հովհաննիսյան):

Труд, обогащающий арменоведение, рецензия, ХА декабрь II, 24 (2004) (соавтор П. Оганисян).

Գրախոսվում է Բ. Հարությունյանի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանի պատմության ատլաս»-ի Բ հատորի Ա մասը: Հինգ մասից (նախնադար, իին դարեր, վաղ միջնադար, զարգացած ավատականության դարաշրջան, ուշ միջնադար), բաղկացած ատլասը կազմված է հիսուն քարտեզից: Հավելվածով ներկայացված են նաև 8 հին քարտեզ, որտեղ նշված է Հայաստանը: Արժեքավոր այս հրատարակությունում քարտեզները ուղեկցվում են տվյալ պատմական ժամանակաշրջանին վերաբերող լուսանկարներով:

2005

41. Բջնիի 2003–2004թթ. ուսումնասիրության նախնական արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XIII (2005), 213–220 (համահեղինակ Հ. Հակոբյան):

Предварительные результаты исследования Бджни 2003–2004 гг, Культура Древней Армении, XIII (2005), 213–220 (соавтор А. Акопян).

Հոդվածում ներկայացված են Բջնի հնավայրում 2003–2004թթ. կատարված պեղումները և մաքրման աշխատանքները, որի ընթացում բացվել է ամրոցի գոյատևման երեք շինարարական հորիզոն (9–12դր., 13–14դր., 15–16դր.): Հետախուզվել է ամրոցի շրջակայքը, որտեղ փաստագրվել են թալանված երկաթեղարյան դամբարան, 12–13դր. խաչ-

քարեր, եռաստիճան պատվանդանով կոթողի մանրամասներ: Ամրոցի հյուսիս-արևմտյան կողմում հետազոտվել է սր. Մինաս Եկեղեցու ավերակները:

42. Բջնի հնավայրը. (ուսումնասիրության նախնական արդյունքներ), Հուշարձան, տարեգիրք, Գ, Երևան, (2005), 103–118 (համահեղինակ Հ. Հակոբյան):

Древнее поселение Бджни (предварительные результаты исследования), Памятник, ежегодник, III, Ереван, 2005, стр. 103–118.

Տե՛ս սույն ցուցակի թիվ 41:

43. Հովհաննավանքն ու Մուղնու սր. Գևորգը ըստ Զաքարիա Քանաքեցու, Տարեգիրք (պատմության ֆակուլտետ), (2005), 188–200:

Ованнаванк и церковь св. Геворга в Мутни согласно Закарии Канакерци, Ежегодник (исторический факультет), (2005), 188–200.

Քննության առարկան է Զաքարիա սարկավագ՝ Քանաքեցու հեղինակած «Պատմագրութիւն» աշխատանքը: Ներկայացված են դրվագներ պատմիչի՝ կենսագրականից: Զաքարիա Քանաքեցու աշխատությունը արժենորված է որպես ապրած ժամանակահատվածը լուսաբանող պատմագիտական և ազգագրական հավաստի աղբյուրի: Հողվածում քննարկվում է Հովհաննավանքը որպես մենաստան և գիտա-կրթական օջախ ու Մուղնու սր. Գևորգ Եկեղեցու կառուցմանը վերաբերող տեղեկություններ: Զաքարիա Քանաքեցու կողմից շարադրված «Հովհաննավանքի Կոնդակը», ներկայացված է որպես անգնահատելի սկզբնաղբյուր միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, կրոնա-իրավաբանական խնդիրները ուսումնասիրելու համար:

44. Չկա քարտեզ, չկա պատմություն, Հայաստանի հանրապետություն(թերթ), 14 (2005), 28 հունվար (համահեղինակ Պ. Հովհաննիսյան):

Нет карты, нет истории, Республика Армения, №14 (2005), 28 января (соавтор П. Оганисян).

Տե՛ս սույն ցուցակի թիվ 40:

45. Հրաշագործ Սուրբ Գեղարդը, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, (2005), 211–233:

Чудотворный Св. Гегард, Библейская Армения, Ереван, (2005), 211– 233.

Տե՛ս սույն ցուցակի թիվ 35 և 36:

46. Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի գիտակրթական նշանավոր օջախ, Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Երևան, (2005), 38–41:

Гладзорский университет как выдающийся очаг научно-просветительский очаг Армении, Международная конференция, посвященная 1600-летию истории создания алфавита и основания школы Амараса, Ереван, (2005), 38– 41.

Հիմնադրույթում ներկայացված են Գլաձորի համալսարանում դասավանդվող առարկաների քանակը, դրանց կարևորությունը: Ուսումնառության ավարտին շրջանավարտները ներկայացրել են ավարտածան: Գոյության վաթսուն տարիների ընթացքում Գլաձորը ունեցել է երեքհարյուրից ավելի շրջանավարտ:

2006

47. Արծափ-Մեղրաձոր, Երևան, (2006), 536 էջ:

Арцах-Меградзор, Ереван, (2006), 536 стр.

Մենագրությունը նվիրված է Մեղրաձոր գյուղի պատմությանը: Յոթ գլուխների բաժանված աշխատանքը շարադրված է մատենագիտական, աղբյուրագիտական, նոթագրական հարուստ նյութի և արխիվային վավերագրերի օգտագործմամբ: Առաջին և երկրորդ գլուխներում ներկայացված են պատմական Կոգովիտ գավառի և մասնավորապես Արծափի ամրոցի պատմությունը, գավառի կարևորագույն ամրոցները, եկեղեցիները, աշխարհագրական միջավայրը, պատմությունը, իրադրությունը թուրքական տիրապետության ժամանակ, ոռու-թուրքական և ոռու-պարսկական պատերազմները և գաղթը դեպի Արևելյան Հայաստան:

Երբերդ գլուխում ներկայացված է զաղթից հետո Մեղրաձոր գյուղում հիմնավորված արծափցիների հետագա գոյատեման գործընթացը: Արծափից ոռոսահայատան զաղթեղուց հետո բավարար հողաբանին ունենալու նկատառումով արծափցիները բնակություն են հաստատում Հրազդանի տարածաշրջանի Մեղրաձոր (Շայշարուխ) և Ծովագյուղ (Չիրուխլու) գյուղերում: Հեղինակը մանրամասն ներկայացնում է նոր ընտրված բնակավայրի հուշարձանները, նորաբնակների կողմից գյուղի կառուցման, կենցաղին, սովորույթներին, ընտանիքին, երկրագործությանը, անասնապահությանը վերաբերող հետաքրքրի տեղեկություններ:

Հաջորդ երկու գլխում քննարկվում են վարչական վերափոխումներին, համայնքային ինքնակառավարման, բնակչության տցիալ-տնտեսական վիճակին վերաբերող հարցերը: Վեցերորդ գլխում տրված է գյուղի եկեղեցու չափաբերական մատյանի գրանցումները՝ սկսած 1861թ. մինչև 1917թ ներառյալ: Վերջին գլխում հեղինակը ներկայացնում է Ղարիբյանների տոհմածառը: Մենագրության հավելվածում գետեղված են ազգաբնակչության, բնակավայրերի, բնակչության աճի և ունեցվածքի մասին վկայագրեր, ինչպես նաև գյուղի գերդատանների կամերալ ցուցակները: Ունի ամփոփումներ ոռոսերեն և անգլերեն լեզուներով:

48. Աղձնիքի հայերի օջախ-թոնրի պաշտամունքի մի քանի սովորույթների մասին, Ավանդական քանակորժանական մշակույթ, միջազգային I գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, (2006), 124–138 (համահեղինակ Ռ. Նահապետյան):

О некоторых обычаях армян Ахдзника в культе очага-тоныра, Традиционное устное наследие, нематериальная культура, сборник статей I международной конференции, Ереван, (2006), 124–138 (соавтор Р. Нагапетян).

Քննարկվում է ծիսապաշտամունքային համալիր հանդիսացող օջախ-թոնիքի դերը Աղձնիքի հայերի կյանքում: Բերված են օջախ և ընտանիք եզրույթները, որոնց նույնությունը հաստատվում է մի շարք սովորույթներով: Համարվում էր, որ օջախի մոտ են ապրում տան ոգիները, իսկ եկեղեցու բացակայության պայմաններում փոխարինում էր նրան: Օջախի պաշտամունքում որոշակի դեր ունեն մոխիրը և կրա-

կը: Նյութը շարադրված է գրականությունից հանված տվյալների և դաշտային գրառումների հիման վրա:

**49. Մեր անվանի դասախոսները, II հ., Երևան, (2006), 5–8,
28–30, 151–152, 172–173, 183–185, 197–198:**

**Наши выдающиеся преподаватели, II том, Ереван, 5–8,
28–30, 151–152, 172–173, 183–185, 197–198:**

Ներկայացված են Աշու Աբրահամյանի, Բարկեն Առաքելյանի, Մորուս Հասրաթյանի, Կարո Ղաֆադարյանի, Բորիս Պիոտրովսկու, Սանդր Սարդարյանի կենսագրական, կրթական, գիտա-մանկավարժական և հասարակական գործունեությանը վերաբերող հակիրճ տվյալներ:

2007

**50. Անիի վերջին թագավորը, Մոլորակ, Լու-Անցելես, հայ-
ամերիկյան շաբաթաթերթ, 314/315, ապրիլ, 17–30, Գլենդեյլ,
էջ 36–38:**

**Последний царь Ани, Молорак (Планета), армяно-
американский еженедельник, №314/315, апрель, 17–30,
Глендейл, стр. 36–38.**

Տե՛ս սույն ցուցակի թիվ 4 և 9:

**51. Լոռին հայոց պատմության մեջ, Ստեփանավանցիներ,
Հանրագիտարանային տեղեկատու, կազմող և գլխավոր
խմբագիր Յու. Խաչիկյան, Երևան, (2007), 18–36
(համահեղինակ Բ. Հարությունյան):**

Лори в истории армянского народа, Степанаванцы, энциклопедический справочник, составитель и главный редактор Я. Хачикян, Ереван, (2007), 18–36 (соавтор Б. Арутюнян).

Հոդվածը նվիրված է Լոռի կամ Լոռե անվանվող տարածաշրջանին: Առանձին ենթավերնագրերով մանրամասն ներկայացված է գավառի վարչական ձևավորումը, տարածքը, սահմանները, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, ճանապարհները: Տրված է Լոռիի մասին եղած սկզբնաղբյուրների տեղեկությունները, վիմագիր հիշակեւութեագիտութուն

տակությունները: Շարադրված է Լոռի պատմությունը Մեծ Հայքի կազմում, Կյուրիկյան (Լոռու) թագավորության, Զաքարյանների, Օրբելյանների, ուստահան կայսրության տիրապետության և հայկական երեք հանրապետությունների ժամանակ:

52. Раскопки крепости Бжни, (2003–2005 г.г.), «Археология, этнография фольклористика Кавказа» международная конференция, сборник докладов, Тбилиси, (2007), 62–63 (соавтор Акопян А.).

Բջնի ամրոցի պեղումները (2003–2005 թթ.), «Կովկասի հնագիտությունը, ազգաբանությունը, բանագիտությունը» Թբիլիսի, (2007), 62–63 (համահեղինակ Հ. Հակոբյան):

Հիմնադրույթում շարադրված են երկարատև դադարից հետո արշավախմբի աշխատանքների վերսկսելը: Տրված են հուշարձանի տեղադրության մասին տեղեկություններ, շերտագրական հաջորդականությամբ ներկայացված են միջնաբերդի գագաթին և ստորին դարավանդում կատարած պեղումների արդյունքները:

2008

53. Անվանի վիմագրագետ-հնագետ (Հոկտեմբերի Զանփոլադյանի ծննդյան 90-ամյակի առթիվ), ՊԲԸ, 2 (2008), 312–318:

Видный эпиграфист-археолог (к 90-летию со дня рождения Рипсиме Джанполадян), ИФЖ, 2 (2008), 312–318.

Հմուտ վիմագրագետ և հնագետ Հոկտեմբերի Զանփոլադյան (1918–2004 թթ.) իր գիտական առաջին քայլեր կատարել է Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ: Երկար տարիներ ապրելով Հայաստանից հետու նրա ուսումնասիրությունների շրջանակը մսացել է անփոփոխ՝ Հայաստանի միջնադարը և վիմագրությունը: Երկար տարիներ մասնակցելով Դվինի արշավախմբի աշխատանքներին նա հրատարակել է մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ նվիրված կավե սնդկամաններին և ապակե իրերին: Զանփոլադյանի հետաքրքրության երկրորդ շրջանակը վիմագրերն են, որտեղ գիտնականը նույնպես իր գնահատելի վաստակն ունի: Կյանքի վերջին շրջանում նա հրատարակության էր նախապատրաստում ամուսնու՝ Բ. Պիոտրովսկու գիտական ժառանգությունը:

**54. Հնագույն Բջնին, ՊԲԸ, 3 (2008), 184–196,
(համահեղինակներ Հ. Հակոբյան, Ա. Գնունի,
Գ. Խաչատրյան, Տ. Վարդանեսով):**

**Древнейший Бджни, соавторы. ИФЖ, 3 (2008), 312–318
(соавторы А.Акопян, А.Гнуни, Г.Хачатрян, Т.Варданесова).**

Հոդվածում քննարկվում է Բջնի գյուղի շրջակայրում գտնվող դամբարանաշտում պեղված դամբարանը: Կրոմիելիսով եզերված դամբարանի քարահողային լիցրում հայտնաբերված խեցեղենը ցույց է տալիս, որ ավերվել է մ.թ.ա. VII–VI դդ. կատարված թաղման ժամանակ և միջնադարում: Քարաշար և հիմնահողային պատերով խցում կատարվել էր խոշոր և մանր եղջերավոր անասունների զոհաբերությամբ ուղեկցվող մեկ անհատի թաղում: Թաղման գույքը կազմված էր դաշույնից և խեցանոթներից: Խեցեղենը քննարկվում է Անդրկովկասից հայտնաբերված համաժամանակյա նյութի համատեքսում և թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի վերջին դարերով:

55. К вопросу о датировке хачкаров Меградзора, Вестник ЕГУ, (2008), 105–117 (соавтор Т. Варданесова).

Մեղրաձորի խաչքարերի թվագրման հարցի շուրջ, ԲԵՀ, 1 (2008), 105–117 (համահեղինակ Տ. Վարդանեսով):

Ուսումնասիրության նյութը Հրազդանի ենթաշրջանի Մեղրաձոր գյուղի եկեղեցու և շրջակայրի տասնյակի հասնող խաչքարերի պատկերագրությունն ու թվագրումն է: Որպես համեմատական նյութ օգտագործվել են տարածաշրջանի (Զրառատի, Լեռնանիստի, Մաքրավանքի, Ծաղկաձորի) խաչքարերը: Հոդվածում քննարկված են նաև ուսումնասիրվող խաչքարերի քանդակագործական դպրոցները, առանձնացված է տեսակի տարածման աշխարհագրական տարածքը:

56. Գլաձորի համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի գիտակրթական նշանավոր օջախ, Հայագիտությունը դպրոցում, 3–4 (2008):

Гладзорский университет – выдающийся научно-образовательный центр средневековой Армении, Арменоведение в школе, 3–4 (2008).

Զաքարյանների կողմից Հայաստանի ազատագրումից հետո ստեղծված համեմատաբար խաղաղ ժամանակահատվածը նպաստավոր

պայմաններ էր ստեղծել հոգևոր կյանքի վերելքի համար: “Պոոշ իշխանի ջանքերով իր տիրույթում գտնվող ժանահատի վանք են հրավիրվում ժամանակի նշանավոր մտածողներ Ներսես Մշեցին և Եսայի Նշեցին: Նրանց կողմից հիմնադրված միջնադարյան Հայաստանի նշանավոր կրթական օջախում՝ Գլաձորի համալսարանում դասավանդվել են տեսական առարկաներ, թվարանություն, տոմարագիտություն, աստղաբաշխություն, երաժշտություն, նկարչություն: Համալսարանը ուսուցանելու մակարդակով հավասար էր Եվրոպական համաժամանակյա հայտնի ուսումնական կենտրոններին:

**57. Հայաստանը ուշ միջնադարում, Հայոց պատմություն,
դպրոցի 7-րդ դասարանի դասագիրը, բաժին III, 19–20
գլուխներ, 169–187, Երևան (2008):**

*Армения в позднем средневековье, История Армении,
История Армении, VII класс, часть III, 19–20 главы, 169–187,
Ереван (2008).*

XV–XVII դդ. ժամանակահատվածը հայ ժողովրդի պատմության մուայլ էջերից է: XIV դ. Վերջին և XV դ. սկզբին Երևիրը ասպատակում էին Լենկթեմուրի երսակները: Ետո Հայաստանը ընկնում է Կարակոյունլու և Ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի լծի տակ: Այդ շրջանում Արցախի, Սյունիքի, Վասպուրականի իշխանական տները ինքնավար էին, մի քանիսը վերականգնում էին իրենց իրավունքները և ստանում մեղիքի տիտղոս: Խաղաղ գոյակցության մի քանի տարիների ընթացքում վերականգնվում է տնտեսությունը և առևտուրը: Երևանը դառնում է հյուսիս-արևելյան Հայաստանի վարչական կենտրոն: Կաթողիկոսությունը վերահստատվում է Էջմիածնում: Քոչվոր նվաճողներին փոխարինում են Սեֆյան Պարսկաստանը և Օսմանյան Թուրքիան, որոնք պատերազմի թատերաբեմ են դարձնում Հայաստանի տարածքը, ինչի արդյունքում ավերվում է Երևիր, քայլայվում տնտեսությունը, գերեվարվում բնակչությունը: Այս հակամարտության արդյունքում Հայաստանի տարածքը երեք անգամ բաժանվում է Պարսկաստանի և Թուրքիայի միջև:

58. Հայաստանի ազգային տալաս, հատոր Բ, թեմատիկ քարտեզներ, Երևան (2008 թ.), (համահեղինակներ՝ Պ. Ավետիսյան, Բ. Գասպարյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան):

Национальный атлас Армении, том II, тематические карты, Ереван (2008) (соавторы: П. Аветисян, Б. Гаспарян, А. Калантарян, Г. Петросян).

Ի. Ղարիբյանի մասնակցությամբ հատորում տեղադրված են Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մարդկային հասրակության զարգացման պարբերական սանդղակ և վեց թեմատիկ քարտեզներ: Քարտեզագրված են քարեղարյան (պալեոլիթ, մեզոլիթ, նեոլիթ), էնեոլիթյան հնագիտական հուշարձանները և միջնադարյան վանքերը, ամրոցները, կամուրջները, խաչքարերը:

2009

59. Լոռե բերդաբարձր, Երևան, (2009), 350 էջ:

Город-крепость Лорэ и его раскопки, Ереван, (2009), 350 стр..

Մենագրությունում շարադրված են Լոռե բերդաբարձրի 1966-1974թթ. պեղումների արդյունքները: Աշխատանքը քաղկացած է 4 գլխից, առաջարանից, ոռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներից, գծագրերի, սկզբնադրյուրների աղյուսակների, համառոտագրությունների ցանկերից:

Առաջարանում ներկայացված է Լոռե բաղադրի մասին մատենագիրների, ճանապարհորդների և տեղագիր ուսումնասիրողների թողած հիշատակությունները և պատմարանների, հնագետների ուսումնասիրությունների արդյունքները:

Առաջին «Լոռե բերդաբարձր XI-XIII դդ.» գլխում շարադրված է Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը Կյուրիկյան թագավորության կազմավորումից առաջ: Քննարկվում է թագավորության հոչակման տարեթիվը, Լոռեն Կյուրիկյան թագավորության և Զաքարյանների օրոք: Երկրորդ ենթավերնագիրը վերտառված է «Լոռեն XIV-XVIII դարերում» որտեղ ներկայացված են տարածաշրջանը Լենկթեմուրի, թուրքմենական քոչվոր ցեղերի, վրաց թագավորների,

պարսիկների, թուրքերի տիրապետության ժամանակ, մինչև որպես ամրոց նշանակության կորցնելը և կրկին վերաբնակեցումը։ Շարադրանքը կատարված է հիմք ընդունելով պատմիչների թողած տեղեկությունները և պատմաբանների ուսումնասիրությունները։

Երկրորդ գլուխը վերնագրված է «Լոռե բերդաքաղաքի պեղումները»։ 1966–1974 թթ. կատարված պեղումները ներկայացված են ըստ տարիների։

Երրորդ «Լոռե բերդաքաղաքի ճարտարապետական հուշարձանները» գլխում նկարագրված է բերդաքաղաքի դիրքը, պաշտպանական կառույցները, տարածքը, շրջակայքը։ Լոռե բերդաքաղաքը բաղկացած է միջնաբերդից, բուն քաղաքից և արվարձաններից։ Մանրամասն քննարկված են միջնաբերդի շինությունները և ճարտարապետա-ինժեներական կառույցները։ Քաղաքատեղում ուսումնասիրվել է գերեզմանատունը, նկարագրված են խաչքարերի արձանագիր պատվանդանները, տրված են արձանագրությունների վերծանությունը ծանթագրություններով։ «Քաղաքի արվարձանները» ենթավերնագրի տակ ներկայացված են Զորագետի վրա կառուցած կամուրջը, կիսավեր պաշտարակը և գաղտնութին։

Չորրորդ գլուխը վերնագրված է «Պեղումներով հայտնաբերված գուածոներ»։ Պեղածո իրերը դասակարգվել և ուսումնասիրվել են ըստ նյութի՝ մետաղ, քար, խեցի, ապակի, ոսկոր։

**60. Մեր անվանի դասախոսները, III հ., Երևան, (2009),
73–74, 141–142, 160–161, (Յու.Մկրտումյանի կենսագրականի
շարադրանքի համահեղինակ Բ. Հարությունյան):**

**Наша выдающиеся преподаватели, III том, Ереван (2009),
73–74, 141–142, 160–161, 211–212 (соавтор библиографии
Ю. Мкртумяна – Б. Арутюнян).**

Ներկայացված են Ստեփան Եսայանի, Յուրի Մկրտումյանի, Գարսեան Շառոյանի, Գևորգ Տիրացյանի կենսագրական, կրթական, գիտա-մանկավարժական և հասարակական գործունեությանը վերաբերող մանրամասն տվյալներ։

2010

61. Բջնիի հուշարձանները (պեղումների արդյունքներ), *Հուշարձան, տարեգիրք, Զ, (2010), 67–82 (համահեղինակ Հ.Հակոբյան, Ա.Գնունի, Գ.Խաչատրյան, Տ.Վարդանեսով):*

Памятники Бджни (результаты раскопок), Ушардзан (Памятник), Ежегодник, Ереван, (2010), 67–82 (соавторы А. Акопян, А. Гнун, Г. Хачатрян, Т. Варданесова).

Բջնի ամրոցի շրջակայրում պեղված վաղ բրոնզեդարյան դամբարանի (տես՝ սույն ցուցակի թիվ 54) մոտ պեղվել է երկրորդը: Հողվածը նախորդ հրատարակության և անսպասու պեղումներով նորահայտ 24×18 մ չափերի բլուրի նկարագրությունն է: Դամբարանի քարահողային լիցքից հայտնաբերվել են վանակատի ցլեպներ, վաղ բրոնզի ժամանակաշրջանի և մ.թ.ա. XII–XI դդ. թվագրվող, ավերված թաղմանը պատկանող խեցեղենի բեկորներ: Բացվել է նաև շառավիղ միջնարմներով առանձին հատվածների քաժանված շրջանաձև շարվածքներով կառույց:

62. Վիմագրագետ-հնագետ Հոհիսիմե Զանփոլայյանը, *Հուշարձան, տարեգիրք, Զ, (2010), 163–170:*

Эпиграфист-археолог Рипсиме Джанполадян (К 90-летию со дня рождения), Ушардзан (Памятник), Ежегодник, 6, (2010), 163–170.

Տես՝ սույն ցուցակի թիվ 53:

63. *Les douze capitales d'Arménie, Lore, Capitale du royaume bagradite de Lori, Marseille, (2010), 249–252 (с автором Patric Donabe'dian).*

Հայաստանի տասներկու մայրաքաղաքները. Լոռե, Լոռու Բագրատունյան թագավորության մայրաքաղաքը, Մարսել, (2010), 249–252 (համահեղինակ Պ.Տոնապետյան):

Հակիրճ հաղորդման մեջ ներկայացված է Լոռե բերդաքաղաքի տեղանքի, Կյուրիկյան թագավորության կազմավորման, միջնաբերդի ամրակառույցների, բնակչության, ճանապարհների խաչմերուկում գտնվող արհեստավորա-առևտրական կենտրոնի նկարագիրը: Շա-

րադրված է նաև քաղաքի իրավիճակը թագավորության անկումից հետո, աննշան բնակավայրի վերածվելը, ավերակները, կատարված պեղումների պատմությունը:

2011

64. Սյունիքյան նորահայտումներ (ուղեգծային այցելության հաշվետվություն), Հուշարձան, տարեգիրք, Է, Երևան, 2011 էջ 129–142 (համահեղինակ Հակոբ Միմոնյան, Արտակ Գնունի, Էմիլ Այվազյան, Էղիկ Քամալյան, Գագիկ Խաչատրյան):

Сюникские открытия, (отчет о маршрутной поездке в горисский и каланский регионы), Ушардзан (Памятник), Ежегодник, 7(2011), Ереван, 129–142 (соавторы А. Симонян, А., Гнуни, Э.Айвазян, Э.Камалян, Г.Хачатрян).

Հոդվածը նվիրված է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի և Պատմա-մշակութային ժառանգություն գիտահետազոտական կենտրոնի համատեղ արշավախմբի Սյունիքի մարզի Վաղատիր, Խոզնավար, Խնածախ, Խոտ, Հարժիս, Քարաշեն, Հալիձոր, Շինուհայր, Քարահովոց, Սվարանց, Տանձատափ, Տաթև, Բարձրավան գյուղերի տարածքներում և շրջակայրում կատարած աշխատանքներին: Աշխատանքների ընթացքում ճշգրտվել են արդեն ցուցակագրված հայտնի հուշարձանները և հայտնաբերվել, քարտեզագրվել, վկայագրվել են նորերը:

2012

65 Հովսեփ Օրբելու հնագիտական գործունեությունը 1905–1920 թվականներին, միջազգային գիտաժողով նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին, զեկուցումների դրույթներ, (2012), 71–74:

Археологическая деятельность Иосифа Орбели в 1906–1920-х гг., Международный симпозиум, посвященный 125-летию со дня рождения академика Иосифа Орбели, тезисы докладов, (2012), 71–74.

Հիմնադրույթում շարադրված են մեծանուն գիտնական Հովսեփ Օրբելու 1905–1920 թթ. կատարած հետազոտությունների մասին, որոն-

ցից կարևոր են Ասիում, Վանում կատարած պեղումները, Գագկաշեն եկեղեցու ջահերի վերականգնումը, վիմագիր արձանագրությունների հավաքումը և վերծանումը:

2013

66. Բջնիի նորահայտ U.Մինաս Եկեղեցին, Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրները, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան (2013), 19–20:

Новонайденная церковь Св. Минаса в Еджни, Проблемы охраны историко-культурного наследия, материалы международной конференции, (2013), 19–20.

Հիմնադրութում քննարկվում է 2012թ. Բջնի գյուղից իյուսիս գտնվող ավերված սր. Մինաս Եկեղեցու տարածքում կատարված պեղումների արդյունքները: Եկեղեցու չափերը, մուտքը, հայտնաբերված ճարտարապետական մանրամասները (որմնասյուներ, որմնախարիսխներ, ծածկի կղմադրներ) վկայում են, որ այն պատկանել է արտաքինից շեշտված արսիդով բազիլիկաների տիպին և թվագրվում է IV–V դարերով:

67. Հայկական լեռնաշխարհը որպես մարդկային հնագույն բնօրրան: Հայոց պատմություն, VI դասարան, բաժին I, թեմա 2, 18–30, Երևան (2013):

Армянское нагорье как древнейшая колыбель человечества. VI класс, авторский коллектив, часть I, тема 2, 18–30, Ереван (2014).

Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար շարադրված «Հայկական լեռնաշխարհը որպես մարդկային հնագույն բնօրրան» թեման ժամանակագրական առումով լայն ընդգրկում ունի՝ քարե դարից մինչև երկաթե դար: Մատչելի ձևակերպումով քննարկվում է քարե դար եզրույթը: Տրված է քարե դարի ժամանակագրական բաժանումները: Շարադրված են Էնեոլիթի, բրոնզի, երկաթի դարաշրջանների մասին համարոտ տեղեկություններ: Տեղեկություններ են տրված նաև նախնադարյան համայնքի, կրոնի ու պաշտամունքի մասին:

2014

**68. Հովսեփ Օրբելի, ծննդյան 125-ամյակի առթիվ,
Հուշարձան, տարեգիրք, Թ, (2014), 155–166:**

**Овсеп Орбели, к 125-летию со дня рождения, Ушардзан
(Памятник), Ежегодник, 9(2014), 155–166.**

Հովսեփ Օրբելին ներկայացված է որպես մեծ հայրենասեր և քաղաքացի, լայն մտահորիզոնի տեր գիտնական: Արժեսրված է Հովսեփ Օրբելի ականավոր գիտնականի մուտքը գիտական աշխարհ, ընդգծված է նրա վաստակը Հայաստանի միջնադարյան հնագիտության զարգացման գործում: Շեշտված է նրա մեծ ներդրումը Անիի և Վանի պեղումներին: Անգերազանցելի է նրա կազմած Անիի հնադարանի գտածոների ցանկը, որտեղ նշված են նաև իրերի գուգահետները: Ներկայացված են Երմիտաժում կատարած աշխատանքները, հատկապես Հայրենական պատերազմի տարիներին արվեստի գործերի և նմուշների պահպանման գործում: Շեշտված է Հ. Օրբելու մասնակցությունը Հայաստանի գիտական կյանքում մասնավորապես Գիտությանների ակադեմիայի կազմավորման խնդրում:

**69. Հայաստանը ուշ միջնադարում, Հայոց պատմություն,
VII դասարան, քաժին I, թեմա 10, 11 (§ 1, 2), 161–175, Երևան
(2014):**

**Армения в позднем средневековье, История Армении,
VII класс, часть I, тема 10, 11 (§ 1, 2), 161–175, Ереван (2014):**

Տես սույն ցուցակի թիվ 57:

2015

**70. Լոռէ բերդարադարը (2009–2013 թթ. պեղումների
նախնական արդյունքները) Հուշարձան, Տարեգիրք Ժ (2015),
29–56 (համահեղինակներ Հակոբ Սիմոնյան, Հարություն
Բադալյան, Տիգրան Ալեքսանյան):**

**Город-крепость Лорэ (предварительные результаты раскопок
2009–2013 гг.), Ушардзан (Памятник), Ежегодник, 10 (2015),
29–56 (соавторы Акоп Симонян, Арутюн Бадалян, Тигран
Алексанян).**

2009–2013թթ. կատարած պեղումների ժամանակ մաքրվել կամ պեղվել են հնավայրի մի շարք հատվածներ: «Քաղաքացիական շենքի» պեղումների ժամանակ հայտնաբերվել են շինաքար օգտագործված տապանաքարեր, ջրավազանի վերածված խաչքարի քառակող արձանագիր պատվանդան: Միջնաբերդի տարածքում հայտնաբերվել են նաև բազալտե գոտ-ջրաժան, քարաշար ջրավազան, ջրատար փողոցներ, տնտեսական հոր, ծիարձան-գերեզմանաքար: Պեղվել է «առաջին բաղնիքը», պարիսպներից 140 մ երկարությամբ մի հատվածը՝ աշտարակներով, կից սենյակներով և ջրի խանդակով: Քննարկված են կավից, մետաղից, ապակուց, ոսկրից, քարից պատրաստված զենքեր, զարդեր, գործիքներ: Քննարկվող նյութը լուսարանված է նաև կառույցների չափագրություններով, լուսանկարների աղյուսակներով:

71. Բջնի գյուղի տարածքում վաղմիջնադարյան նորահայտ Ար. Մինաս Եկեղեցին, «Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես (2015), 339–362 (համահեղինակ Լ. Կիրակոսյան):

Нововыявленная раннесредневековая церковь Св. Минаса на территории села Бжни, История и культура, арменоведческий журнал, (2015), 339–362, (соавтор Л. Киракосян).

Բջնի գյուղից 2կմ հյուսիս գտնվող խոնարհված եկեղեցու մասին համատեղ հոդվածում Ի. Ղարիբյանը շարադրել է եկեղեցու տեղանքի և կառույցի մասին հատվածը: Մանրամասն նկարագրել է եկեղեցում գտնվող քանդակը, վրան փորագրված անվան ստուգաբանությունը, Մինաս անունով ճգնավորի գործունեությունը: Ներկայացրել է եկեղեցու անվան հետև կապված ավանդությունը, պեղումներ կազմակերպելու գործընթացը:

2016

72. Բջնիի նորահայտ Ա. Մինաս Եկեղեցին, «Հայաստանի հնամարդաբանության և հնաժողովրդագրական հարցեր», միջազգային գիտաժողով նվիրված Վանի պեղումների 100-ամյակին, հիմնադրույթներ, Երևան, (2016), 38–40:

Տես առյն ցուցակի թիվ 66:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ի. Գ. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ЛИТЕРАТУРА О ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ И. Г. ГАРИБЯНА

1. Ռ. Հակոբյան, Մեր անվանի թոշակառուները, Պարապում են և խորհում, Երևանի համալսարան, թերթ, 1963, 25(27) սեպտեմբեր:
2. Մանուկյան Լ., Որտեղ էիր, Գլանոր, Ավանգարդ, 1971, 16(122) հոկտեմբեր (առյն հոդվածը 1971թ. արտատպակել է, Բեյրութի Զարթոնք թերթում):;
3. Կարապետյան Գ., «Գլանոր՝ երկրորդ Աթենք պանծալի», Երևանի Համալսարան, 2, 1984, 32–33:
4. Բ. Հարությունյան, գրախոսության, Ուշագրավ աշխատություն, «Գլանոր (տեղադրությունը, պեղումները և վիմագիր արձանագրությունները), Երևան, (1983)», Երեկոյան Երևան (թերթ), 24 հուլիսի, 1984:
5. Խրլովյան Գ., գրախոսություն, «Գլանոր (տեղադրությունը, պեղումները և վիմագիր արձանագրությունները), Երևան, (1983)», ԲԵՀ, 1, 1984, 255–257:
6. Արմեն Կարապետյան, Իգիթ Ղարիբյան, «Սուրբ Գեղարդ», ընսական հայացք, Շողակն Արարատյան, Երկշարաթաթերթ, հուլիս, Բ, թիվ 14(104), 2004,
7. Ղարիբյան Իգիթ Գարեգինի, Ով ով է, Կենսագրական հանրագիտարան, Հայեր, Հայկական Հանրագիտարան, հատոր առաջին, 2005, 712:
8. Սարգսյան Հ., Թաղենոսյան Ա., Գարբիելյան Մ., Նոր Գիրք, գրախոսություն, «Արծավի-Մեղրանոր, Երևան, 2006», Երկիր, 2(8), մարտի, 2007:
9. Հակոբյան Հ., Նշանավոր տարելից, Երկիր (շաբաթաթերթ), 19(52) հոկտեմբերի, 2007, 13:

10. Հարությունյան Բ., Հակոբյան Հ., գրախոսություն, «Արծավ-Մեղրաձոր, Երևան, 2006» Երևանի պետական համալսարանի հրատարակություն, 536 էջ:
11. Մինասյան Է., Ղարիբյան Իզիթ Գարեգինի, Երևանի Պետական համալսարանի Պատմության 90-ամյա ֆակուլտետը, Երևան, 2009, 183–184:
12. Ղարիբյան Իզիթ Գարեգինի, Երևանի պետական համալսարան, Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2009, 372–373:
13. Հ. Ավետիսյան, Է. Մինասյան, Պ. Ավետիսյան, Իզիթ Ղարիբյան, Հուշարձան, Տարեգիրք, Ը, Երևան, 2013, 136–139:
14. Է. Մինասյան, Հ. Ավետիսյան, Հ. Հակոբյան, Հնագետ Իզիթ Ղարիբյան, Պատմություն և մշակույթ, 2013, 278–280:

ԱՃԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԲԲԵԼԱԿԱՆ ՑԱՆԿ АЛФАВИТНЫЙ СПИСОК ТРУДОВ

- Անիի վերջին թագավորը, 1968
- Անիի վերջին թագավորը, 1969
- Անիի վերջին թագավորը, 2007
- Անվանի վիմագրագետ-հնագետ (Հ. Զանփոլադյանի ծննդյան 90-ամյակի առթիվ), 2008
- Արամերեն արձանագրություն. Նորահայտ հուշարձաններ Սահմանական շրջանում, 1977
- Արծավ-Մեղրաձոր, 2006
- Բջնի ամրոցի պեղումները, 1981
- Բջնի ամրոցի պեղումների նախնական արդյունքները, 2003
- Բջնի միջնադարյան ամրոցի պեղումները, 2004
- Բջնիի 2003–2004թթ. ուսումնասիրության նախնական արդյունքները, 2005
- Բջնի հնավայրը. (ուսումնասիրության նախնական արդյունքներ), 2005
- Բջնիի հուշարձանները (պեղումների արդյունքներ), 2010
- Բջնիի նորահայտ Ս. Մինաս Եկեղեցին, 2013
- Բջնի գյուղի տարածքում վաղմիջնադարյան նորահայտ սր. Մինաս, 2015

- Բջնիկ նորահայտ Ս. Մինաս Եկեղեցին, 2016
- Բրոնզե կանքեղ Գլաձորից, 1983
- Գլաձորի համալսարանի հնագիտական պեղումները, 1971
- Գլաձոր (տեղադրությունը, պեղումները և վիմագիր
արձանագրությունները), 1983
- Գլաձորի համալսարանի պեղումները, 1983
- Գլաձորի համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի գիտակրթական
նշանավոր օջախ, 2008
- Գրիգոր Լուսավորչի Աջը, 2003
- Դատավարական կարգը, ընտանեկան և ժառանգական իրավունքը
ըստ Միսիթար Գոշի «Հայոց դատաստանագրքի», 1964
- Թանահատ-Գլաձորից հայտնաբերված մետաղի առարկաները, 1995
- Թանահատ-Գլաձոր (Տեղադրությունը, պեղումները, վիմագիր
արձանագրությունները) (դոկտորական ատենախոսության
սեղմագիր), 1996
- Թանահատի գլխավոր Եկեղեցու անվանակոչության հարցի շուրջ, 2001
- Լոռե քաղաքը մատենագիտության մեջ, 1968
- Լոռե քաղաքի մատուռ դամբարանը և նրա կավանոթները, 1969
- Լոռե քաղաքի պեղումները, 1969
- Լոռե, Լոռի, միջնադարյան քաղաք-ամրոց, 1978
- Լոռի քաղաք-ամրոցի միջնադարյան քաղնիքները, 2000
- Լոռի բերդ – քաղաքի շատրվանող ջրավազանները, 2004
- Լոռի բերդ – քաղաքի շատրվանող ջրավազանները, 2004
- Լոռե բերդաքաղաքը, 2009
- Լոռէ բերդաքաղաքը (2009–2013թթ. պեղումների նախնական
արդյունքները), 2015
- Խութելու Բուղա Արծրունի, 1979
- Կյուրիկյան թագավորության հոչակման տարեթվի շուրջը, 1977
- Հայագիտությունը հարստացնող աշխատություն, 2004
- Հայաստանի ազգային աւլաս, 2008
- Հայոց պատմություն, 7-րդ դասարան, 2008
- Հայոց պատմություն, VI դասարան, 2014
- Հայոց պատմություն, VII դասարան, 2014

Հնագույն Բջնին, 2008

Հրաշագործ Սուրբ Գեղարդ, 2003^o

Հրաշագործ Սուրբ Գեղարդը, 2003

Հրաշագործ Սուրբ Գեղարդ, 2005

Հովանավանքն ու Մուղնու Ս.Գևորգը ըստ Զաքարիա սարկավագի,
2003

Հովհանավանքն ու Սիւնու սր. Գևորգը ըստ Զաքարիա Քանաքեցու,
2005

Հովհաննեսի Օրբելու հնագիտական գործունեությունը 1905–1920
թվականներին, 2012

Հովհաննես Օքսի, 2014

Զկա քարտեզ, չկա պատմություն, 2005

Մեր անվանի դասախոսները, II հ., 2006

ՄԵՐ անվանի դասախոսները, III հ., 2006

Միջնադարյան Հայաստանի խնկամանները, 1988

Միջնադարյան Հայաստանի շատրվանող Զրավագանները, 2002

Սիրից Ֆռն Կողերուն Ա. Էջմիածնի և Երևանի մասին, 2003

Պատմության վկաները, 1984

Պեղումներ Բջնի ամրոցում, 1978

Այունիքյան նորահայտումներ (ուղեգծային այցելության հաշվետվություն), 2011

Ստեղծանավանցիներ, Հանրագիտարանային տեղեկատու, 2007

Վիմագրագետ-հնագետ Հոխվահմեն Զանփոլաղյանը, 2010

Ուշ բրոնզեդարյան նորահայտ դամբարան Մեղրաձոր գյուղի տարածքում, 1987

О наличии двух урартских крепостей – городов, находящихся на территории холмов Армавира и с. Давида, 1965

Северные походы урартских царей и основание Аргиштихинили, 1968

Крепость-город Лоре и её раскопки. Автореферат диссертации, 1970,

Раскопки крепости Бжни, (2003–2005гг.), 2007

К вопросу о датировке хачкаров Меградзора, 2008

**Les douze capitales d'Arménie, Lore. Capitale du royaume bagradite de Lori,
2010**

ՀԱՄԱՐԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՅԲԲԵԼԱԿԱՆ ՑԱՆԿ АЛФАВИТНЫЙ СПИСОК СОАВТОРОВ

- Ալեքսանյան Տ. 70
Այվազյան Է. 64
Ավետիսյան Պ. 58
Բաղալյան Հ. 70
Բիյազով Լ. 23
Գասպարյան Բ. 58
Գնունի Ա. 54, 61, 64
Խաչատրյան Գ. 54, 61, 64
Կիրակոսյան Լ. 71
Հակոբյան Հ. 41, 54, 61
Հակոբյան Ն. 24
Հարությունյան Բ. 51, 60
Հովհաննիսյան Պ. 40, 44
Մելքոնյան Հ. 24
Նահապետյան Ռ. 48
Պետրոսյան Հ. 58
Սարգսյան Գ. 14
Սիմոնյան Հ. 64, 70
Վարդանեսյան Տ. 54, 61
Քալանթարյան Ա. 14, 58
Քամալյան Է. 64

Ակոպյան Ա. 52
Վարданесова Տ. 55

Patric Donabe'dian 63

ՀԱՄԱՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ СОКРАЩЕНИЯ

ԲԵՀ	Բանրեր Երևանի համալսարանի
ԳՏ	Գիտություն և տեխնիկա
ԴՀԱԱ	Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներ
ԵՀՀ	Երևանի համալսարանի իրատարակչություն,
ՀՍՀ	Հայկական Սովետական հանրագիտարան
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՊԲՀ	Պատմա-բանասիրական հանդես
ՍՀ	Սովետական Հայաստան (ամսագիր)
ՍՀայ.	Սովետական Հայաստան (թերթ)
ՔՀ	Քրիստոնյա Հայաստան
ВЕУ	Вестник Ереванского Университета
ИФЖ	Историко-Филологический Журнал
СА	«Советская Армения», ежемесячник
ХА	Христианская Армения

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իգիր Ղարիբյան. գիտական գործունեության համառոտ ակնարկ	5
Իգիր Գարեգինի Ղարիբյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	10
Гариян Игит Гарегинович	12
Основные даты жизни и деятельности	
Гарияна Игита Гарегиновича	16
Աշխատությունների ժամանակագրական ցանկ ծանոթագրություններով	18
Գրականություն Ի. Գ. Ղարիբյանի կյանքի և աշխատությունների մասին	50
Աշխատությունների այբբենական ցանկ	51
Համահեղինակների այբբենական ցանկ	54
Համառոտագրություններ	55

428

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օքան.



FL0622722

A/E
205x17

ISBN 978-9939-9208-7-0



9 789939 920870